

ՔՐԻՍՏՈՍ

ՀԱՆՔԻՄ

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

Ի Գ. ՏԱՐԻ — ԹԻՒ 26

||

25 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԱԲԱԶԱՐ ԵՒ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ (ձախ-

բորդի Տպաւորուքիւններ)

ՈՒՂԵՐՁ ՎԵՐ. ՏՕԲԹ. ՉԷՅՄՊԸՐՄԻ

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՓՈՇԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ (Թարգմ.)

ԱՄԱՂԵՐՁԻ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Բարձրագոյն Վարժարան

Հայուհեաց Վարժարան

ԳԻՏԱԿԱՆ ԷՋԵՐ

ՇԱԲԹՈՒԱՆ ՆՕԹԵՐ

ՔՍՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

ՅԱԿՈՒԹՈՍ Հ. ՃԷՃԻՋԵԱՆ

ՏՕԲԹ. ՉԷՅՄՊԸՐՄ

ՀԻԻԿՍ ՄՈՒՆՍԹԵՐՊԷՐԿ

ԷԼԻՋ

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Հատը 40 փարա

ՏՊԱԿՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

Դիւրութիւն մը ընծայելու համար մեր բաժանորդներուն՝ իրենց վր-
նարումներուն համար, եւ ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն բաժա-
նորդագրուիլ թերթիս՝ ստորեւ կը հրատարակենք անունները մեր գաւա-
ռական գործակալներուն՝ որոնց կրնան դիմել իրենց հաշիւներուն վր-
նարման կամ բաժանորդագրուելու համար:

Աճափա. — Լաշկազն կֆ. Խանդավազ

Ատարազար. — Ստեփան կֆ. Սափրիչեան

Ատանա. — Խաչատուր կֆ. Միկսեան

Երզնկա. — Յարութիւն կֆ. Տոնաթոսեան

Իզմիր. — Կարապետ կֆ. Մալեանեան

Խարբերդ

Մաճուրէթ-Իւլ-Ազիզ

Կիւրին. — Վեր. Գեորգ Տեմիրճեան

Մալաթիա. — Տ. Գրիգոր Բահ. Թաշճեան

Մարզուան. — Գեորգ կֆ. Կիւլեան

Նիկոսիոյի. — Վեր. Փառնակ Իսիկեան

Ուրֆա. — Սողոմոն կֆ. Գնանեան

Պարտիզակ. — Լազարոս կֆ. Գանչեան

Պրուսա. — Մարթէն կֆ. Նիկողոսեան եւ Վեր. Եղիա Շամիկեան

Պէյրութ. — Մկրտիչ կֆ. Պողոսեան

Պիթլիս. — Խաչիկ կֆ. Վարդանեան

Ռօտոսթօ. — Միհրան կֆ. Գուգուֆեպպեան

Սամսոն. — Պողոս կֆ. Սիմոնեան

Սըվազ. — Մանուկ կֆ. Տիպեան

Վան. — Խաչիկ կֆ. Լեւոնեան

Տիւրպէթիւր. — Յովհաննէս կֆ. Միսրեպեան



Ազգային, Գրտական, Գրական եւ Քաղաքական

Ի Գ. ՏԱՐԻ — ԹԻԻ 26

25 ՅՈՒՆԻՍ 1905

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻԻՐԱԿՆ Շաբաթերի Տարեկան բաժնեգիսն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դրօ., Արսասահմանի հասար՝ 5 ռուպլի. կամ 12 Ժրանկ կամ 2 1/2 տոլար, քրթասառութեան ծախքը մեր վրայ: — 2. Գեոհ կը ծախուի հասար 40 փարայի: — 3. « ԲԻԻՐԱԿՆ » ի վերաբերեալ բաժանորդագին, նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պոլսոյ Հասուի միջոցաւ՝ Խաչերդ Գօլէն, Բրօժ. Յակոբոս Հ. Ճէնիգեանի. — 4. Անվար նամակ կամ գրութիւն չընդունուիր. — 5. Տար օրինակի բաժանորդ զանոցին մէկ օրինակ նուր կը տրուի:

ԱՏԱԲԱԶԱՐ ԵՒ ՀԱՅՈՒՅԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ի Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա.

Ատարազարի անցեալին վրայ շատ քիչ բան գիտենք. մշուշով մը կարծես սքողուած է ան: Անշուշտ բաղդատարար նոր քաղաք մըն է. եւ մենք աւելի անոր արդի պայմաններով է որ կը շահագրգռուինք, քան թէ անոր անցեալով, Ակնբերեւ է սակայն թէ հին Հռոմայեցւոց ժամանակներէն այդ կողմերը պէտք է որ գտնուած ըլլան աւաններ կամ քաղաքներ, որոնց վայրերը ճշդել այժմ կարելի չէ, առանց հարկ եղած կարեւոր պեղումները կատարելու: Առ այժմ հռոմէական մնացորդներէն մէկ կենդանի վկայ մը կայ կանգուն կեցած, որ տաքտամ ու անորոշ լեզուով մը կը խօսի այդ հին ժամանակներուն ու բնակչութեանց վրայ: Պէշ Բէօփրիւ կոչուածն է այն. ոչ շատ հեռի Ատարազարէ, որ իբր 300 մէթր երկայնու-

թիւն ունեցող կամուրջ մըն. այժմ ցամաքի վրայ, ու բաւական ընկղմած հողին մէջ. պահելով սակայն իր հնութեան բոլոր վսեմութիւնը եւ փառքը: Ահագին քարերը որոնցմով հաստատապէս կառուցուած է ան, եւ գէթ տասնըջորս կամ տասնըհինգ դարերու մէջէն յաղթանակով նայող կամարները ինքնին կը վկայեն թէ շինուած են այն ազգէն որ աշխարհիս պատմութեան մէջ նշանաւոր եղած է իր շինած պողոտաներով: Ու երբ տօթակէզ արեւի մը ներքեւ կայնած այդ առանձնութեան մէջ աչքերն իսյառած կը նայէինք հնութեան այդ ներկայացուցիչին վրայ, այդ քարեղէն շրթունքները, համր եւ անխօս, բան մը չէին ըսեր մեզի, պատմութիւն մը չէին ընել անցեալ կեանքերու նկատմամբ, որոնք իրենց բոլոր թա-

փով եւ ուժգնութեամբ կ'անցնէին այդ վայրերէն. երբ վարէն ալ՝ այդ հոյակապ կամարներուն ներքեւէն, հին եւ համբաւուոր Սաքարիան իր պղտոր շուրերը կը հոսեցնէր: Գետը ալ չհոսիր անկէ, բայց գետը իր տեղը փոխած է միայն, անդին, քիչ մը անդին՝ ան ոլորտապտոյտ եւ յաղթական ընթացքով կը քալէ: Գետը իր գոյութիւնը կը անցուցած չէ. իր ճամբան, իր վայրը փոխեր է միայն, Ըօի թէ քարէ շրթունքները համր էին, բան մը չէին պատմեր, քանզի արձանագրութիւն մը չտեսնուիր անոնց վրայ, գէթ ես չկրցի տեսնել: Բայց ոչ, համր չեն անոնք: Արձանագրութիւններ թէ որ գտնուէին անոնց վրայ, շատ քիչ բան պիտի կարող ըլլային պատմել: Իսկ այժմ այդ լուսթեան մէջ անհատուժ հատորներ կան: Այդ լուս, խոշոր քարերէն ի՞նչ ականջիս կուգար ակնդ բարբառը որ կ'ըսէր թէ մարդկային սեփ ստեղծումէն ի վեր մարդկային սիրտը եղած է ճիշդ նոյնը: Հին կեանքն է կրկին որ նոր ձեւերով կ'ապրի և պիտի ապրի ալ անթիւ դարերու մէջ: Այս գաղափարն էր անա որ կուգար այդ վիթխարի ու անձայն քարերէն, որոնք հանդարտիկ տեղաւորուած էին ով գիտէ ո՛ր ձեռքերէն: Ու երբ ես այս մտածումներուն մէջ խոստուգուած էի, ինձ ընկերացողներէն վեր. Յովսէփ Ճէճիգեան առաջարկեց ինձ որ քանի մը քայլ վեր ելլենք, փոքրիկ բլրակի մը վրայ: Օղը հեղձուցիչ էր, արևը իր ճառագայթները ուղղակի նետերու պէս կը թափէր մեր գլխուն վրայ. բայց առաջարկը ներկայացուեցաւ շատ համոզկեր եղանակաւ մը. ճամբան շատ կարճ էր, եւ մեզի կարելի պիտի ըլլար տեսնել անկէ գեղեցիկ, հանդարտ լիճը որ հոն մեզմէ ոչ շատ հեռի կը տարածուէր՝ շրջապատուած անտառներէ ու բլրակներէ. բայց մէնք որովհետեւ ցածն էինք, կարելի չէր մեզ տեսնել գեղեցիկ տեսարանը: Յուշիկ մեզմիկ քայլերով առաջնորդուեցայ դէպ ի վեր, եւ անա անտառներուն եւ ծառերուն մէջէն սակաւ ինչ եւ աղօտաբար սկսաւ երեւալ

լիճը, բայց յստաւորէն: Քրտինքի կաթիլները սկսած էին երեւալ ճակատնուս վրայ, բայց մեղմ ձայնը կ'ըսէր «քիչ մըն ալ վեր»: Այո, կ'արժէր քիչ մըն ալ վեր ելլել ու յստակ, պայծառ կերպով տեսնել կապուտակ, անոյշ լիճը՝ որ երկնային հանդարտութեամբ մը կը նիրհէր հոն անտառներուն գրկին մէջ, ինչպէս մանուկ մը խաղաղ նիրհով կը ննջէ իր մօր բազուկներուն մէջ: Ջինջ երկինքէն նետուած կապուտակ կտորի մը կը նմանէր ան, աննման, գեղեցիկ իր անոյշ գոյնով, ու վսեմ իր անվողով խաղաղութեամբ: Յաւիտենականութեան մը հիանալի պատկերն էր որ հիմա աչքերուս առջեւ կը պարզուէր, ու իմ մտածութիւններս կ'առնէր կը տանէր դէպ ի խաղաղ ու անվրդով երկնային հեռանկարը, որ կը շողար հոն կարծես կապուտակ լիճին խաղաղաւէտ կուրծքին վրայ: Կ'արժէ ուրեմն քիչ մը վեր բարձրանալ՝ մերթ ընդ մերթ, տօթին ու քրտինքին մէջէն, քիչ մը յոգնելով ու հեւալով՝ որ պահիկ մը գէթ նայուածք մընտոնեք Աստուծոյ սակած Յաւիտենականութեան վրայ՝ որ հեռուն կը շողայ վսեմ խաղաղութեամբ՝ նման այն ջինջ երկինքին որ ուրիշ անդորր ներգաշնակութիւն մը կը պատկերացնէ մեր գլխուն վերեւ, լռին ներդաշնակութիւն մը որ տիեզերքին ներդաշնակութիւնն է:


Մինչ այս մինչ այն, մեծադորդ բոցալեզու վայրաշարժը հեռուէն ծայր կուտայ, կը սուբայ կուգայ իբր թէ հովին թեւերուն վրայ, մէկ վարկեանէն կը հասնի Հռոմէական հնութեանց սրբավայրը. այդ հին շինուածքը, հին դարաւեր քարերը կը դղրդին, կը դղրդինք մենք ալ նորութեան այս հրաշալի զօրութենէն, հին եւ նորը քով քովի են հիմա, զարմանալի դրացնութիւն մը: Ի՞նչ պիտի ըսէին այդ հին Հռոմէացիները տեսնելով այս որոտալից հրէշը որուն ձայնին արձագանգ կուտած զոզալով բլուրները ու հովիտները, արթննալով իրենց հնադարեան քունէն, Ո՞վ է, ի՞նչ է այս որ կը յանդգնի վրդովել այս դասական

վայրերուն սրբանուէր լուսթիւնը ու յաւերթական հանդարտութիւնը Գիտութիւնն է, լոյսն է այն որ կը կոխտէ այս նոր ու անձանօթ վայրերուն վրայ ալ՝ իր բարեբները, իր յառաջադիմական օրհնութիւնները սիւեւելու ամէն տեղ, շնորհիւ մեր լուսամիտ, յառաջդիմասէլ Օգոստափառ Սուրբանին. վայրաշարժը ճամբայ կը բանայ իրեն՝ մութ անտառներուն, յաւերթական ժայռերուն եւ լեռներուն մէջէն, ու նոր զարգացումներ, նոր հարստութիւններ ու նոր օրհնութիւններ իր հետ կ'առնէ կը տանի ամէն կողմ: Բարձրեալն Աստուած օգնական ըլլայ մեր Օգոստափառ Սուրբանին, Անոր երկրաշէն աշխատութիւնները նորագոյն յաջողութիւններով պսակելու:

Կարելի՞ Բան է չզգածուիլ, չբերկրիլ լոյսի ու յառաջդիմութեան տեսքէն. կարելի՞ Բան է չտեսնել ինչ որ բարձրագոյն է, ինչ որ բարի է. մանաւանդ կարելի՞ Բան է չմասնակցիլ բարձրագոյնին, բաժին չունենալ յառաջդիմութեանէն: Ո՛չ, կարելի չէ, կ'ըսէի իւրովի, երբ վերադարձիս նստած կը մտածէի առանձին, շոգեկառքի վակոնին մէջ. չէ՞ որ նոյն իսկ սա հեռուէն անցնող ձիերը եւ էշերը կը դղրդին. կը խրտչին ու նորութիւնը կ'զգան, երբ շոգեկառքը անոնց մօտէն կ'անցնի: Ու ճիշդ այս մտածման պահուստ, տեսայ որ երկաթուղիին մօտիկը, ճամբուն եզերքին վրայ, խոշոր, այլանդակ գոմէջ մը կ'արածի: Յայտնի էր որ տիղմին, իր սիրական տիղմին մէջէն նոր յեր էր, ու յայտնի էր նաեւ որ ոչ թէ միայն իր ամբողջ մարմնով, այլ նոյն իսկ գլուխովն ալ տիղմին մէջ ամբողջովին ընկնէր էր ինքզինք, քանզի անոր սեւ ճակատին վրայ շորցած տիղմի խոշոր կտոր մը դեռ ինքզինք կը փայլեցնէր: Կ'ուտէր ու կ'ուտէր խոտը, անյագաբար: Անտարակոյս աս կենդանին ալ, մտածեցի, որչափ ալ որ ապուշ, անբան երեւոյթ ունի, այնքան մօտիկէն անցնող շունդալից վայրաշարժէն պիտի խրտչի. բայց օ՛հ, ո՛վ զարմանալ-

եացս. կենդանին ոչ թէ միայն բնաւ չխրտչեցաւ, ոչ թէ միայն չդադրեցուց իր խոնարհ ճաշը, այլ գլուխը անգամ վեր չառաւ տեսնելու թէ ի՞նչ էր այս դղրդեցուցիչ բանը որ իր մօտէն կ'անցնէր: Իր խոշոր ապուշ աչքերը վար տնկած միշտ խոտին վրայ, գոնէ անգամ մը վեր չառաւ պատիւ ընելու յառաջդիմութեան մեծ գործիքին: Այն ատեն ճամարիտ հիացում մը զգացի այն լուրը էշերուն, շորիններուն, ձիերուն եւ կովերուն, որոնք տարօրինակ բան մը կ'զգային շոգեկառքին վազքէն եւ որ եւ է կերպով իրենց զգացումը ցոյց կուտային:

ՅԱԿՈՒՄՆՆՆԻ Հ. ՃԷՃԻՋԵԱՆ



ՈՒՂԵՐՁ ՎԵՐ. ՏՕՔԹ. ՉԷՅՄՊԸՐՍԻ

Հետեւեալը Պարտիզակի Բարձրագոյն վարժարանի Տնօրէն՝ Վեր. Տօքթ. Չէյմպըրսի՝ ընթացաւարտ կարգին ըրած ուղերձն է, զոր գրի առած և մեզի դրկած է Վեր. Ս. Պ. Մանուկեան:

* *

Ձեր կեանքին մէկ շրջանն ալ անցած է: Քանի մը տարիներու աշխատութեանէ վերջ՝ կը ներկայանաք ստանալ վկայական, որ կը հաստատէ թէ տարիներով աշխատած էք վարժարանիս մէջ, և թէ այնչափ առաջ գացած է ձեր մտաւոր մշակութիւնն ու բարոյական կրթութիւնը որ՝ ընկերութեան վստահութիւնը վայելելու արժանի կը համարուիք:

Մենք չենք վկայեր թէ դուք կատարեալ և կամ շատ բարձր կրթութիւն ստացած էք, այլ միայն թէ սկսած էք հասկնալ կեանքին պատասխանատուութիւնները, թէ անկեղծ փափաք ունիք ինքզինքնիդ Աստուծոյ և մարդոց առջեւը միշտ պարտաճանաչ եւ հաւատարիմ ցուցնելու, թէ որոշում ունիք եւ ջանք պիտի ընէք՝ ըլլալու միշտ օգտակար անձեր եւ եռանդուն հետեւողներ ամէնէն վսեմ կեանքերու:

Այսօր կը փափաքիմ ձեզի շեշտել մէկ երկու բաներ, որոնք կը յուսամ թէ օգտակար պիտի ըլլան ձեզի ասպագային մէջ:

Նախ՝ ինքնայայտ ճշմարտութիւն մը. ճշմարտութիւն մը, որ կրկին ու կրկին շեշտուելու պէտք ունի: Աշխատասէր եղէք: Անգործ մարդը անէծք է իր անձին եւ ընկերութեան: Աստուած ըսաւ. «Քու ճակատիդ քրտինքովը հաց պիտի ուտես»: Այս վճիռը օրհնութիւն եղաւ մարդկութեան: Աշխատասիրութիւնը գլխաւոր գարմաններէն մէկն է այն զժբաղդութիւններուն ու մեղքերուն՝ որոնց տակ մարդկութիւնը կը ճնշուի այսօր: Բեռ մի՛ ըլլաք ուրիշներու: Մարդկային ընկերութիւնը ձեր անձին մէջ յատաղիմութեան տարր մը թող գտնէ: Եթէ ձեզի համար պատրաստուած գործ չկայ կեանքի ասպարէզին մէջ, նոր գործ ստեղծեցէք: Եթէ ձեր տրամադրութեան տակ մշակուած արտ չկայ, ուր կարող ըլլաք առանց տաժանելի աշխատութեան ցանել ձեր սերմը ու քաղել հունձքը, ընուութեան ծոցը գացէք եւ հոն նոր գետին բացէք. աշխարհիս շահու աղբիւրներուն վրայ դուք ալ աղբիւր մը աւելցուցէք. ասով ասրեցուցած կ'ըլլաք ձեր անձը, եւ ձեզմէ նուազ կարողութիւն ունեցողներուն բռնը թեթեւցուցած:

Երկրորդ՝ քիչով գոհ եղէք: Երբեմն եւրոպական զանազան երկիրներու մէջ միլիոնատէրներ կ'ելլեն որոնք անագին գումարներ կուտան բարեսիրական հաստատութիւններու, բայց ատոնք նախ կ'իւրացնեն ընկերութեան դրամը եւ յետոյ անոր կը դարձնեն այդ գրամին մէկ աննշան մասը. այդպիսիներու կեանքէն աշխարհ շատ աւելի վնաս տեսած է քան օգուտ: Միջին դասակարգի անձ մը որ խնայողութեամբ կ'ապրի, եւ իր համեստ շահէն մաս մը կը գործածէ բարեսիրական ձեռնարկներու համար, պիտի վայելէ Աստուծոյ օրհնութիւնը եւ մարդոց գնահատումը: Քու լաւ գործածուած քիչդ Աստուծոյ տոմարին մէջ պիտի արձանագրուի այն կարգին մէջ, ուր կը գտնուի արձա-

նագրութիւնը պատանիին այն հինգ նկանակներուն եւ երկու ձուկերուն, որոնցմով հինգ հազար մարդիկ կերակրուեցան:

Երրորդ՝ պէտք է յիշել թէ նիւթակն յաջողութենէ, մարմնաւոր ասպնոլութենէ եւ հանգստութենէ շատ աւելի կենսական եւ արժէքաւոր բան մը կայ մարդու համար, այն է մարդու հոգեկան բնութեան բարձրագոյն պահանջներուն յագեցումը: Մարդ անասուններու պէս շտեղծուեցաւ, որ ուտէ եւ խմէ, աշխատի, շարժարուի եւ մեռնիւ՛ցնուի հող էիր հողին դառնասը՝ հոգւոյն համար չէ ըսուած: Զեր մեծ յաջողութիւնը պիտի ստանաք շնորհիւ ձեր բարոյական եւ հոգեկան կրթութեան: Անցեալները Ամերիկայի մէջ երեւելի դատաւոր մը իմաստալից ատենախօսութիւն մը ըրած ատեն ըսաւ. «Մարդկային պատմութեան էջերուն մէջ յիշուելու միակ արժանի եղողները անոնք են որոնք հետեւած են բարձր իտէալներու եւ ցուցուցած են բարոյական ոյժ»: Քարլայլ երեւելի փիլիսոփան կ'ըսէ. «Մարդկութեան պատմութեան մէջ օգտակար շարժում մը, բարեկարգութիւն մը երբեք եղած չէ, եթէ ոչ այն մարդոց միջոցով որոնց ուղղակի եւ անմիջական նպատակը եղած է պաշտպանել բարձր բարոյականութիւն եւ ծառայել հոգեւոր արթնութեան»: Պէտք է ուրեմն անհատը շինել բարոյապէս: Դուք ալ շարունակեցէք մշակել ձեր միտքը, սիրտը, հոգին՝ կարդալով լաւագոյն գիրքերը, մանաւանդ Ս. Գիրքը, անսալով խոհուն մարդոց խրատներուն:

Չորրորդ՝ ջանացէք իւրաքանչիւր օր օգտակարապէս անցընել: Տարին 365 օր ունի. 365 բարիքներ գործեցէք իւրաքանչիւր տարի: Կան որ կը սպասեն մեծ առիթներու: Ան որ աչքի զարնող մեծ գործ մը կ'ընէ, կը ծափահարուի մարդոց կողմէ. բայց ան որ առանց աղմուկի խոնարհաբար եւ հաւատարմօրէն կը կատարէ իւրաքանչիւր օրուան պարտականութիւնը, կ'արժանանայ Աստուծոյ պովեստին:

Հեղինակ մը կ'ըսէ թէ այս քսաներորդ դարուն նշանաբանն է ծառայութիւն: Ուս-

եալը՝ տգէտի՛ն եւ ուրախը՝ տրտմածին կը ծառայէ այսօր : Հին ատեններ Ասպետը հետը առնելով սուր, սապար ու սաղաւարտ, վիշապներ գտնելու եւ սպաննելու կ'ելլէր : Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը : ձեր տեղը կայնեցէք կորովի, մէջքերնիդ ճշմարտութեամբ ամուրցնելով տրգիտութեան, անբարոյութեան, հպարտու-

թեան, անկրօնութեան եւ մարդկութեան սպառնացող ամէն չարիքի դէմ պայքարեցէք, Անոր անունով Որուն դրօշը իրաւունք ունիք վեր բռնելու, առանց ամչնալու, ցորչափ ձեր խորհուրդները մաքուր են և սըրտերը անկեղծ : Տէրը պահէ ձեզ և իր երեսին լոյսը փայլեցնէ ձեր վրայ :

ՏՕՔԹ. Ռ. ՁԵՅՄՊԸՐՍ

Հետեւեալ ներհուն տեսութիւնը՝ գրուածքն է ժամանակակից նշանաւոր գիտունի մը, Հիւկօ Մունսթէրպէրկի :

Հարվըրտ Համալսարանի Հոգեբանական ճիւղին պետն է Իրօֆ. Հիւկօ Մունսթէրպէրկ, եւ առաջնորդ մը հոգեբանութեան մէջ : Հրատարակած է հոգեբանական և իմաստասիրական բազմաթիւ ուսումնասիրութիւններ՝ Գերմաներէն ու Անգլերէն լեզուներով : Իմաստասիրական առաջնակարգ գրողի մը անունը ունի ամբողջ աշխարհի մէջ : Ինքն էր որ գլխաւորապէս աշխատեցաւ ու յաջողեցաւ Գիտութեանց եւ Արուեստներու Համաժողովը գումարել Ս. Լուիզի Ալխարհահանդէսին մէջ, եւ որուն դեր-նախագահը ընտրուելու պատիւին արժանացաւ :

Յ Ա Ի Ի Տ Ե Ն Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Յկուր, սիրելի բարեկամ, նստէ հոս վառարանիս մօտիկ : Եկուր, տաքցուր ձեռքերդ եւ խօսակցի՛նք՝ մեր կորսնցուցած բարեկամին վրայ : Որչափ յաճախ հոս կը նըստէք ան ինծի հետ ձմրան երկար իրիկունները ու կը պայծառացնէք իմ մօայլ գրատունս իր զուարթարանութիւններովն ու ծիծաղներովը : Ալ չպիտի լսենք իր ձայնը : Ձեմ կրնար բացատրել թէ որչափ խորին վիշտ առթեց ինծի անոր կորուստը : Սա բանը միայն գիտեմ թէ երբեք չպիտի նըստիմ ես հոս կրկին, առանց ցաւելու որ այնքան կարճ եղաւ մեր այս բարեկամին կեանքը՝ իր բոլոր քաղցրութիւններովն ու ներքին գեղեցկութիւններովը : Կը յիշե՞ս ամբասայն առաւօտը երբ առաջին անգամն ըլլալով անոր հանդիպեցար հոս : Ո՞վ կը խորհէր

թէ այսքան շուտ պիտի գար Նոյեմբերի վերջին բաժանման այս օրը : Բայց ինչո՞ւ չես նստիր քիչ մը խօսելու ինծի հետ, ինչո՞ւ կը վարանիս :

Ա՛հ, կը հասկնամ, կը տեսնեմ պատճառը : կը տեսնեմ զայն ամպոտ աչքերուդ և ճակտիդ վրայ : Աչքերուդ մէջ կը կարգամ միաքիչ Անոնք կ'ըսեն ինծի թէ համբարախ ենք իրարու գործնական ամէն ինդրի մասին, բայց հոս՝ այս խնդրին մէջ՝ կը բաժնուին մեր ճամբաները : Ապագային ուրիշ աշխարհի մը մէջ վերստին տեսնել կը յուսաս զուր մեր բարեկամը : Անոր մարմինը հողին յանձնելու ատեն երբ հանդերձեալ կեանքի մէջ երջանիկ հանդիպում մը կը խօստանար Երէջը, տեսայ թէ հաւանութեամբ կը շարժէիր գլուխդ իբր թէ ճիշդ սրտիդ

լեզուն կը խօսէր ան: Խորհեցայ թէ՛ սխալ կը մեկնէի սիրտդ, բայց հիմա կը հասկնամ չսխալած ըլլալս: Գիտեմ հիմա թէ իմ այս խօսքերս վիրաւորեցին քեզ, եւ թէ կը քաշուիս ինձմէ իբրեւ հաւատքէ ու դաւանանքէ զուրկ անաստուածէ մը, որ կը ջանայ մեռցնել ունեցած հաւատքդ անմահութեան վրայ: Կը նայիս ինձի իբրեւ գիտունի մը՝ որ իր տեսած ու շօշափած, կշռած ու չափած բաներուն միայն կը հաւատայ եւ անոնցմէ դուրս ոչ մէկ բանի գոյութիւն ունենալը կ'ընդունի, որուն համար սնտոր առասպել մըն է լոկ յաւիտենական կեանքը: Զարմանալի չէ՞ որ մեզի չափ սրտակից մը տերիմներ ըլլան երկու մարդիկ, և սակայն այսչափ տարբերին իրարմէ իրենց ամենախորին խորհուրդներուն մէջ:

Բայց եկուր. շեմ կրնար թողուլ որ երթաս ասկէ, առանց իմ պաշտպանողականս լսելու: Ո՛չ սկեպտիկ մըն եմ ես և ոչ ալ անհաւատ մը: Կը հաւատամ Յաւիտենական Կեանքին: Վառարանիս այս կրակը մարելէն առաջ լաւագոյն կերպով հասկցած պիտի ըլլաս զիս: Թող մեր բարեկամին յիշատակը փոխադարձ լաւագոյն հասկացողութիւն մը յառաջ բերէ մեր միջև:

Զարմանալի չէ որ սխալմամբ զիս նկատեցիր մէկը անոնցմէ, որոնք արդի գիտութեան յաղթական ոգիովը հպարտացած՝ ծաղրական կամ առ առաւելն անտարբերութեացք մը կը բռնեն հանդերձեալ կեանքի գաղափարին հանդէպ: Մեր բոլորտիքը ամէն կողմ զատ զատ խուճերու բաժնուած կը տեսնենք գիտական ու կրօնական աշխարհահայեցողութիւններով մարդիկը: Եկեղեցի կրնայ երթալ գիտունը, բայց իր տեսութիւնները արմատապէս կը տարբերին կրօնական դաւանանքներէ: Ինչպէս գիտական ընդարձակ ծանօթութիւններ կրնայ հաւաքել Եկեղեցիի մարդը, բայց իր տիեզերքը չձեւակերպուիր գիտական աշխարհահայեցողութեան մը համաձայն: Այնպէս կը թուի թէ, էսպէս անկարելի է որ իրարու հետ համաձայնին Գիտութիւնն ու կրօն: Եւ սա-

կայն, բարեկամս, կ'զգամ ես թէ նոյն ամբողջին մասերը կը կազմեն Գիտութիւնն ու կրօնը եւ կատարելապէս համերայիս են իրարու հետ:

Ճշմարիտ է թէ գիտութեան մարդն եմ ես, ինչպէս կը վկայէ սեղանիս վրայ կեցող սա՛ մանրադիտակը եւ դարակներուն մէջ շարուած գիրքերէն ամէն մէկը: Այո՛, իմ կիրքս ու երջանկութիւնս է նիւթի այս տիեզերքը եւ մտքի կեանքը կառավարող օրէնքները փնտոել ու գործածել ունեցած չնչին ուժերս: Թիզիքական ու հոգեկան աշխարհներու օրէնքները օրէ օր աւելի և աւելի կը յափշտակեն զիս իրենց զարմանալի յստակութեամբն ու վեհաշուք զօրութեամբը: Անկապ ծանօթութեանց հաւաքածոյ մը չէ ինձի համար գիտութիւնը, լոկ պատասխանը հետաքրքիր միտքերու ըրած հարցերուն, այլ ստուգութիւնն է թէ չկայ փոփոխութիւն մը ամբողջ տիեզերքի մէջ, անտեսանելի հիւլէի մը շարժումներէն սկսեալ մինչեւ աննիւթ զգացումներու եւ խորհուրդներու հոսանքները մարդկային գիտակցութեան մէջ, որ չգայ ու չերթայ բնական օրէնքներու համաձայն, ստուգութիւնը՝ թէ ոչինչ կրնայ գոյութիւն ունենալ պատճառի եւ արդիւնքի հսկայ մեքենականութենէն դուրս: Հարկն է որ կը շարժէ լուսաւորները երկինքի մէջ, եւ հարկն է որ կը շարժէ յուզումները մտքիս մէջ: Ոչ մէկ հրաշք կըրնայ խզել պատճառի եւ արդիւնքի անձայր շղթան կամ միջամտել բնական օրէնքներու անփոփոխելի ընթացքին. — ոչ մէկ հրաշք կրնայ ամենափոքր շամանդաղ մը իսկ խտորեցնել իր ճամբէն եւ կամ ու է զգացում ստեղծել մտքիս մէջ՝ երբ դադրի ուղեղը իր պաշտօնը կատարելէ:

Շրթներուդ սեղմումներէն եւ մատներուդ ալ անհանդարտ շարժումներէն կը տեսնեմ, բարեկամս, թէ վրաս ունեցած կասկածներդ կը հաստատել իմ այս խոստովանութիւններով: Ի՞նչ կը նշանակեն այս յայտնութիւնները, կը հարցնես սուր նայուածքիդ մէջէն, եթէ ոչ չկայ Աստուած ու չկայ ան-

մահութիւն, թէ Ֆիզիքական տիեզերքի մէջ կը պարփակուի իրականին ամբողջութիւնը, եւ թէ երբ որգերու ճարակ ըլլայ անգամ մը մարդուս մարմինը՝ կարելի չէ այլ ևս որ արթննայ անոր միտքը ապագայ մի- լինաւոր տարիներու ընթացքին: Բայց դեռ շնեցիր վերջին խօսքս. աւարտե՛մ ըսելիք- ներս: Հոս այս կէտին վրայ է որ կանգ կ'առնեն խիստ շատեր, որովհետեւ կոիւր հրաէր մը կը լսեն գիտութեան այս պատ- զամներուն մէջ: Բայց պէտք է որ վէճի բռնուինք երկուքս. յառաջանանք:

Որչա՛փ դիւրին է սխալ ըմբռնել գիտու- թեան ունեցած պաշտօնը: Որչա՛փ յաճախ կ'արհամարհուի ան իր հակառակորդներէն, իրեն վերագրուած կարգ մը պահանջներու համար՝ զորս երբեք չէ բրած, եւ ո՛րչա՛փ յաճախ այնպիսի դիրք մը կը տրուի անոր իր բարեկամներուն կողմէ՝ որ ջախջախիչ է բոլորովին ու կործանարար: Գիտութիւնը պատուել՝ կը նշանակէ յարգել անոր սահ- մանաւորումները: Վերջնական իրականու- թեան հետ գործ չունի Գիտութիւնը ու չկրնար ունենալ, եւ երբեք ջանալու չէ ու- նենալ: Երբ իմաստասիրութիւն մը ըլլալ կը փորձէ ան, ոչ միայն անդին կ'անցնի իր ի- բրուունքներու սահմաններէն, այլ մանա- ւանդ կը տկարացնէ իր դիրքը: Ամէն ա- նոնք որ չեն կրնար ներշնչուիլ մեռած նիւ- թի այս Լսկայ զանգուածէն զոր Ֆիզիքա- կան տիեզերք կը կոչենք, կ'սկսին բացա- ութիւններ փնտռել բնութեան մէջ, իրօ- ղութիւններ՝ որոնք վեր ըլլալ կը թուին օրէնքի տիրապետութենէն եւ որոնք Գերբ- նական Զօրութեան մը կամքէն բխիլ կ'ե- բեան: Այս տեսակ մարդիկը սո՛րուար մեծամասնութիւնը կը կազմեն ամ- բողջ մարդկութեան, կ'ուրարիանան մեծա- պէս ամէն անգամ որ գիտութիւնը անկարող կ'ըլլայ մեկնել Ֆիզիքական կամ մտաւորա- կան աշխարհի մէջ յայտնուող ո եւ է երե- տոյթ. որովհետեւ այդ անկարողութեան մէջ ապացոյցներ գտնել կը հաւատան հրաշքի վաւերականութեանը, այսինքն Գերբնակա-

նին միջամտութեանը բնութեան եւ. պատ մութեան գործքերուն մէջ, և հետեւապէս ժխտումը գիտութեան այն հաստատումի- թէ՛ բնական օրէնքներով կը կառավարու- ամբողջ տիեզերքը կամ թէ պատճառի ու արդիւնքի անխզելի յաջորդութիւն մը կը կազմեն բնութեան բոլոր փոխակերպու- թիւնները առանց բացառութեան. այն սփ- Ֆիզիքական փոխադրւումներ, որչա՛փ հա- փեկան: Գիտութիւնը ինքն է որ կը տուժէ, երբ իր սահմանները առաթուր կոխելով կը փորձէ իր վերջնական իրականութիւն մը ներկայացնել պատճառի ու արդիւնքի ազդե- ցութեան տակ գործող այս հսկայ զանգուածը նիւթի զոր տիեզերք կ'անուանենք: Որովհե- տեւ Մարդկային Պատասխանատուութեան եւ Աստուծոյ Ամենակարողութեան հաւատքը բոյն դրած են մեր սրտի խորքերուն մէջ, եւ անհրաժեշտապէս պիտի ջախջախուին ու փշուր փշուր ըլլան գիտութեան բոլոր այն տեսութիւններն ու վարդապետութիւնները որոնք հակառակ են սրտի խորագոյն պա- հանջներուն: Եւ սակայն հաւատա՛ ինծի, բարեկամ, ծնունդ չկրնար առնել երբեք այդ պայքարը՝ եթէ ճիշդ մեկնուի նշանակու- թիւնն ու նպատակը գիտութեան:

Մեր կեանքի գործերն ու պարտականու- թիւնները կատարելու ատեն ստիպուած ենք յարաբերութեան մէջ մտնել մեզ շրջապա- տող իրերուն հետ: Բացարձակ անկարե- լիութիւն մըն է ապրիլ այս աշխարհին մէջ, առանց ազդուելու մեր միջավայրէն եւ ա- ռանց ն'երգործելու անոր վրայ: Բայց քառս մըն է իրերու այդ աշխարհը ուր ոչ մէկ գործ կրնանք տեսնել եթէ կարգ ու կանոն չ'հաստատենք նախ: Պէտք է գիտնամ ես թէ ի՛նչ պիտի ընէ կամ ի՛նչ փոփոխութիւն պիտի կրէ առջեւ գտնուող սա առարկա եթէ ձեռք զարնեմ. —պիտի չարժի՞ ան թէ վառի կամ հալի. գո՞յն պիտի փոխէ թէ ձայն հանէ. պիտի մլասէ՞ ինծի թէ կերակ- րէ զիս: Զիս շրջապատող առարկաներուն այս քառսին մէջ կարգ ու կանոն հաստա- տելու եմ ես, որպէս զի կարող ըլլամ յա-

րաբերութեան մտնել անոնց հետ, որպէսզի կարող ըլլամ ապրիլ անոնց մէջ: «Արդիւնք» կը կոչեմ ամէն ինչ որ կ'ակնկալուի առարկայէ մը, եւ բուն առարկան կ'ըլլայ այն ատեն «պատճառ» մը: Կրակին զպշկով կ'այրի՞ն մատներս, ուրեմն պատճառ մըն է կրակը եւ անոր արդիւնքն է մատներուս այրիլը: Մտային այս տեսակ գործողութեամբ մըն է որ պատճառի և արդիւնքի կարգաւոր դրութեան մը մէջ իրարու հետ կը միացնէ գիտնականը բոլոր իրերը ու երեւոյթները այս քառասոյն աշխարհին, որովհետեւ չկրնար անիկա ո եւ է գործ տեսնել առանց ընդունած ըլլալու թէ նախընթաց պատճառներու արդիւնքն է ամէն ինչ որ տեղի կ'ունենայ տիեզերքի մէջ: Գիտութեան գործն ու նպատակն է խորհուրդի վրայ ձեւակերպել ու կաղապարել աշխարհ, մինչեւ ամէն բան հասկցուի իբր մէկ մասը պատճառներու և արդիւնքներու անծայր ու անխզելի շղթայի մը: Մարդկային կամքն է որ պատճառի եւ արդիւնքներու այս համապարփակ դրութիւնը կ'ստեղծէ ու անոր մէջ կ'առնէ, անոր համաձայն կը ձեւակերպէ, անոր վրայ կը կաղապարէ իրերու քառսը: Որովհետեւ, ինչպէս ըսինք, կարելի չէ ապրիլ եւ կարելի չէ գիտութիւններ կազմել առանց պատճառի ու արդիւնքի այս տեսակ յարաբերութիւն մը հաստատելու մեզ շրջապատող իրերու քառսին մէջ: Մարդկային կեանքի նպատակներուն ծառայելու համար հնարուած գործիք մըն է, ուրեմն, գիտութիւնը: Արժէքաւոր, վստահելի եւ անփոխարինելի գործիք մըն է ան, բայց արուեստական ձեւակերպում մըն է ուրիշ ո եւ է գործիքի նման.—մարդկային կամքին կողմէ կիրառուած բան մըն է, և իր շինութեան նպատակին հայեցակէտէն գիտուելով է միայն որ կրնայ ո եւ է նշանակութիւն ունենալ կամ արժէք ստանալ: Մեր իսկ կամքին ստեղծագործութիւնն է պատճառներու եւ արդիւնքներու այս անսահման դրութիւնը գոր տիեզերք կը կոչենք:

Եւ տե՛ս, բարեկամ, մեզ շրջապատող

իրերու քառսէն տիեզերք մը ձեւակերպելու համար գիտութիւնը ի՞նչպէս ստիպուած է այլափոխել մեր նախնական փորձառութիւնները: Փայտի վառ կտորներ կը տեսնենք վառարանին մէջ, բայց տարրագէտին համար շամանդաղային շարժումներ միայն կան հոն, բոլորովին տարբեր բան մը մեր նախնական փորձառութիւնէն: Այս աթոռներուն տեղը, որոնց վրայ կը նստինք, եռիլիոնաւոր յարաշարժ հիւլէներ կը զետեղէ բնագէտը, և լոյսի այս ճառագայթները, որոնց միջոցաւ զիրար կը տեսնենք, եթեբային մութ ու անգոյն ալիքներ են իրեն համար: Իսկ ձայնիս այս հնչիւնները, որոնք իմ խորհուրդներս կը բերեն քեզ, օդի անձայն ու անչուկ թրթռումներ կը նկատուին գիտութեան կողմէ: Այսքան մեծ փոխակերպութեանց կ'ենթարկուին ահա մեր իրական փորձառութիւնները՝ երբ մարդկային միտքը փորձէ կարգ ու կանոն հաստատել շրջակայ իրերու քառսին մէջ: Բայց կեանքի պահանջները կը գոհացնէ գիտութիւնը մեր անմիջական փորձառութիւնները այսքան այլակերպելով: Այս միջոցաւ կարող կ'ըլլայ ան պատճառի եւ արդիւնքի համապարփակ շղթայով մը իրարու կապակցել ընտելեան բոլոր իրերն ու երեւոյթները, կարող կ'ըլլայ կանխատեսել իրերու կրելիք փոխակերպութիւնները զանազան պարագաներու տակ, որով կը յաջողի մարդս ապրիլ ու գործել օրէնքի տիրապետութեան ներքեւ գտնուող տիեզերքի մը մէջ ու անոր համեմատ եղանակաւորել իր կեանքին գործունէութիւնները: Ամէն ինչ որ կը ծառայէ պատճառի և արդիւնքի յարաբերութիւններով իրարու օղակել մեր փորձառութեան ներկայացող իրերն ու երեւոյթները, կը կոչուի «Գիտական Ճշմարտութիւն»: Իրերու աշխարհը պատճառներու եւ արդիւնքներու դրութեան մը վերածելու նորանոր յաջողութիւններն են որ կը կազմեն ինչ որ գիտական յառաջդիմութիւն կը կոչենք: Եւ չմոռնանք բնաւ

թէ գիտունին մտքին մէջ միայն գոյութիւն ունեցող իրականութիւն մըն է պատճառի եւ արդիւնքի այս համապարփակ դրութիւնը :

Գիտեմ թէ այս տեսակ չոր հակաճառութեան մը հետեւելու տրամադրութեան մէջ չես գտնուիր այսօր, բարեկամս, եւ սակայն եթէ այս քանի մը դժուարին քայլերը առնես ինծի հետ՝ իսկոյն պիտի կանգնիս այն տեսակ դիրքի մը վրայ, ուրկէ պիտի կրնաս լայնալիր տեսութեան մը մէջ ընդգրկել ամբողջ դաշտը : Չես կրնար խուսափիլ այլեւս հետեւեալ երկու եզրակացութիւններէն : Նախ թէ, Գիտութիւնը բնաւ չկընար բացատրել մեզ իրականութիւնը՝ որուն մէջ կ'ապրինք : Անտարակոյս իրական կեանքի կը ծառայէ ան՝ եթէ ոչ լոկ ցնորք մը պիտի ըլլար, եւ իրական փորձառութեանց վրայ է հիմնուած՝ եթէ ոչ երազ մը պիտի ըլլար սոսկ : Բայց տակաւին արուեստական շինութիւն մըն է մեր կամքին որոշումովը ձեւակերպուած եւ մեր կեանքին ծառայելու նպատակին մահմանուած : Ո՛չ իրաւունք ունի գիտութիւնը իր այս նպատակէն անդին անցնելու եւ ոչ ալ ո եւ է արժէք կ'ունենայ երբ անցնի ինչ այնոյս խեղաթիւրում մըն է մեծցնել ու իմաստասիրութիւն մը ընել զայն եւ կրօնք մը, ու անոր դիմել իրականութեան վերջնական նշանակութիւնը հասկնալու համար :

Աւելին կայ. կը հասկնաս, երկրորդ թէ, բնական ոչ մէկ գիտութիւն կրնայ ո եւ է բան ըսել մեզ մեր անձին նկատմամբ, որ արտադրիչն է գիտութեանց : Անտարակոյս հետեւողական ըլլալու է գիտունը, ու պէտք է պատճառի եւ արդիւնքի գործիքը կիրարկէ նաեւ իր իսկ անձին ըննութիւններուն առթիւ, պէտք է նկատէ ինքզինքը իբրեւ մեքենայի նման գործող մարմին մը եւ իր ներքին կեանքին փորձառութիւններն ալ իբրեւ պատահաբաներ որ տեղի կ'ունենան այս մեքենային մասնաւոր

մէկ բաժնին մէջ, այսինքն ուղեղին : Գիտական ճշմարտութիւն մըն է, այսպէս, թէ ուղեղին մէջ տեղի կ'ունենան մեր գաղափարները եւ երեւակայութիւնները, մեր զգացումները եւ յուզումները, ինչպէս գիտական ճշմարտութիւն մըն է թէ արտաքին աշխարհին մէջ կուգան անձրեւն ու ձիւնը, Թուն իսկ մեր կամքը, գիտական այս ճշմարտութեան համաձայն, արդիւնքն է նախընթաց պատճառներու : Այս տեսակ հետեւողականութիւն մը սքանչելի է, արդարեւ, իր կալուածին մէջ : Բայց մոռնալու չհնք թէ բուն իսկ մեր ազատ կամքն է որ, այս ինչ նպատակին համար, կ'որոշէ պատճառի եւ արդիւնքի դրութեան մէկ մասը ըմբռնել ինքզինքը, եւ այսպէս բնական օրէնքներու տիրապետութեանը տակ գտնուող իրականութիւն մը համարել մեր անձը : Իրական պայքար մը չգտնուիր, այսպէս, գիտութեան պահանջին եւ մեր անձնագիտութեան պահանջին միջեւ : Օրէնքներու տակ գործող մտաւոր մեքենականութիւններ ենք ամէնս ալ, ինչպէս կը սորվեցնէ մեզ գիտութիւնը : Բայց միւսնոյն ատեն պատճառի ու արդիւնքի շղթայէն անկախ ու ազատ էակներ ենք, ինչպէս կը սորվեցնէ մեր անձնագիտութիւնը : Մարդս իր կամքովը որոշած է կապուածը կատել ինքզինքնիս պատճառի եւ արդիւնքի այն շղթայով որ արտադրութիւնն է բուն իսկ մեր մտքին եւ որուն միակ նպատակն է կարգ ու կանոն հաստատել մեզ շրջապատող իրերու քառսին մէջ, ու այսպէս ծառայել մեր կեանքին պահանջներուն : Իրապէս ա՛յն ենք, ինչ որ գործնական կեանքի մէջ կը զգանք ըլլալ :

ՀԻՒԿՕ ՄՈՒՆՍԹԵՐՊԵՐԿ

(Շար.)



ՓՈՇԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Առանց փոշիի կապոյտ երկինք չպիտի ըլլար. երկինքը անլուսին գիշերներու մէջ երեւցածէն աւելի սեւ պիտի ըլլար: Այս սեւ հեռանկարին վրայ հրաշէկ արեւը սաստկութեամբ պիտի փայլէր, ու ակնխտիղ լոյսի և մութ ստուերի զօրաւոր հակապատկերը պիտի յատկանշէր երկրին մակերեսը: Բան մը չպիտի գտնուէր մեղմելու այս մեծ հակապատկերը, բաց ի լուսինէն ու լուսաւորներէն, որոնք տեսանելի պիտի ըլլային ցորեկը: Երկրին լուսաւորումը պիտի նմանէր այն տեսարանին զոր կը դիտենք երբ կը նայինք լուսինին հեռագիտակով. վասն զի լուսինը մթնոլորտային ծածկոյթ չունի, հետեւաբար ոչ ալ՝ օդին մէջ առկա լինող փոշիի հիւլէներ: Բոլորովին փոշիին կը պարտինք մեր վայելած հաճելի և հաւասարապէս ցանցնուած ցորեկուան լոյսը, որուն յարմար են մեր աչքերը. և փոշին է որ այնչափ կը նպաստէ դաշտանկարին գեղեցկութեանը: Աս կը բացատրէ թէ ինչպէս փոշին երկինքին կամարը կը լուսաւորէ, բայց չբացատրեր թէ ինչու արեւին ճերմակ լոյսին կապոյտ ճառագայթները մանաւանդ կը ցոլանան, եւ կանանչ, դեղին եւ կարմիր ճառագայթները նուազ աստիճանաւ կը ցոլանան: Աս կախում ունի փոշիի մասնիկներուն խոշորութենէն: Փոշիի էն նուրբ մասնիկները միայն օդային հոսանքներու միջոցաւ կը տարածուին օդին ամէն խաւերուն մէջ, և միայն այս նուրբ և ընդարձակօրէն սփռուած մասնիկներն են որ ոեւ է կարեւորութիւն ունին: Արդ, նկատողութեան առնենք լոյսին կազմութիւնը և վերջին ծայր կարծուութիւնը եթերային ալիքներուն՝ որոնք կը կազմեն լոյսին էութիւնը: Այս ալիքները, թէեւ մանրադիտականօրէն պզտիկ, մեծապէս կը տարբերին իրարմէ երկայնութեան մասին: Նուրբ մթնոլորտային փոշին կը պարունակէ շատ մասնիկներ որոնք բաւական մեծ են ցոլա-

ցընելու համար կարճ կապոյտ եթերային ալիքները, իսկ կը պարունակէ թիւով աւելի նուազ մասնիկներ, որոնք կարող են ցոլացնել կանանչը եւ դեղինը, և կը պարունակէ աւելի քիչեր՝ որոնք պէտք եղածին չափ մեծ են ներգործելու երկայն կարմիր եթերային ալիքներուն վրայ: Կարմիր լոյսը հետեւաբար կ'անցնի բազմաբար անարգել փոշիի մասնիկներու մեծ մասին մէջէն. կապոյտ ճառագայթները ընդհակառակը կ'արգելուին և կը ցանցնուին և ուստի կ'ըլլան տեսանելի: Այս է պատճառը որ էն նուրբ փոշին, ինչպէս նաեւ երկինքը կ'երեւայ կապոյտ:

Ուստի էն նուրբ փոշին կապոյտ է: Յաճախ դիտուած է թէ սիկաուի մը վառած ծայրէն դէպի վեր ոլորտուող մուխը կապոյտ է, մինչդեռ ծխողին բերնէն ելած մուխը ճերմակ է: Այս վերջին պարագային մէջ մասնիկները միացած եւ ճերմակ լոյս ցոլացնելու աստիճան խոշորցած են: Այսպէս նաեւ, գիւղական պարզ օրուան մը մէջ, երկինքը կապոյտ է, բայց քաղաքին մէջ՝ երկինքը ճերմակի պէս կ'երեւայ, վասն զի աւելի մեծ թիւով փոշիի խոշոր մասնիկներ կան օդին մէջ: Մանաւանդ լեռներու գագաթներուն վրայ է որ երկինքը խիստ կապոյտ է, վասն զի անոր մթնոլորտը կը պարունակէ փոշիի միայն էն նուրբ մասնիկները: Շատ բարձրերը երկինքը գրեթէ սեւ պիտի ըլլար, եթէ օդին մէջ փոշիի մասնիկներ կախուած չըլլային:

Ուստի կը տեսնենք թէ փոշին շատ կարեւոր դեր մը կը կատարէ մեր մթնոլորտին մէջ. անձրև յառաջ բերելու մէջ փոշիին ունեցած ազդեցութեան պատճառը սա է թէ գոլորչին հեղուկի կը վերածուի փոշիի մասնիկներուն վրայ: Բացորոշ իրողութիւն մըն է թէ երկրին ու ծովուն մակերեսէն արեւուն միջոցաւ շոգիացած ջուրի քանակութենէն կաթիլ մը անգամ չվերադառնար առանց խտանալու փոշիի մասնիկի մը վրայ՝ իր կորիզի վրայ: Ասիկա շատ դիւրաւ կ'պացուցուի: Օդով լեցնենք մեծ սրուակ մը,

որ բամբակէ խճուժով զտուած մաքրուած է, մինչեւ որ մէջը զտնուած բոլոր փոշին զուրս ելլէ եւ սրուակը լեցուի փոշի չպարունակող օգով: Եթէ այս փոշիէ զերծ օղին՝ շոգիի հոսանք մը տանք եռոցէն, պիտի տեսնենք թէ օղը թափանցիկ է, ե ուստի անտեսանելի: Հետզհետէ սրուակին ներսի կողմերը կը սկսին շոգի կաթեցնել. շոգին պաղած միջոցին հոս կը խտանայ: Բայց եթէ սովորական փոշոտ օղ փշենք սրուակին մէջ՝ շոգին յանկարծ ամպային երևոյթ մը կը ստանայ, վասն զի փոշիի մասնիկներուն վրայ կը խտանայ, եւ սրուակին մէջ իբր թէ անձրեւ կուգայ: Ասոր պատճառը այն է թէ շոգին փոշիի մասնիկներուն վրայ կը խտանայ եւ կը ծանրացնէ զանոնք մինչեւ որ անձրեւի կաթիլներու պէս վար կ'իյնան:

Առանց փոշիի, ուստի, մշուշ չպիտի ունենայինք. ոչ ամպեր, ոչ անձրեւ, ոչ ձիւն, ոչ գեղափայլ երանգներով արեւամուտեր, ոչ ալ կապուտակ երկինքներ, Երկրին մակերեսը, ծառերը, տուները, ինչպէս նաեւ մարդիկ ու կենդանիները պիտի ըլլային միակ առարկաները՝ որոնց վրայ շոգին պիտի խտանար, եւ ասոնք պիտի սկսէին կաթկըթիլ, երբ օղը պէտք եղածին չափ պաղէր: Զմեռը ամէն րոտն սառնային կեղեւով մը պիտի ծածկուէր: Մեր հագուստները իրենց վրայ խտացող ջուրին մէջ պիտի թաթխուէին: Հովանոցները օգուտ չպիտի ընէին: Շոգիով ծանրաբեռնուած մթնոլորտը մեր սենեակներէն ներս պիտի մտնէր եւ խտանար պատերուն ու կարասիներուն վրայ: Մէկ խօսքով, մեր ապրած աշխարհը բոլորովին տարբեր աշխարհ մը պիտի ըլլար՝ եթէ փոշի չըլլար բնութեան մէջ:

Թարգմանեց ԷԼԻԶ



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Բարձրագոյն Վարժարանը այս տարի մեծ փայլով ու շուքով կատարեց իր ամավերջի հանդէսները:

Յունիս 12/25ին, Կիրակի, առտուան պաշտամունքին՝ տեղիս Հայ-Աւետարանականներու մատուռը լեցուած էր ունկընդիրներու երկսեռ բազմութիւնով մը, լսելու համար ընթացաւարտներու քարոզը, զպրոցին համակրելի տնօրէնը ու գաւառիս եկեղեցիներուն հայրիկ-միսիոնարը՝ Վեր. Տօքթ. Զէյմպըրսէն:

Վեր. Տօքթ. Զէյմպըրս խիստ ճարտարօրէն վեր բերաւ իր քարոզին մէջ թէ՛ երկրային կեանքը պատրաստութիւն մըն է լոկ եւ այդ պատրաստութիւնը պէտք է որ ըլլայ, ոչ թէ օրէւանին մէջ, ուր հասարակ ու ստորին կեանքեր կը բնակին, այլ՝ վերնասան մէջ, ուր պատուաւոր հիւրեր կը մեծարուին:

Երկուշաբթի իրիկուն ժամը 1ին տեղի ունեցաւ վարժարանին չորս կարգերու Ատենախօսական Մրցումի հանդէսը, մեծ բազմութեան մը ներկայութեանը: Իւրաքանչիւր կարգէ ընտրուած երեք աշակերտներ իրենց ճառերը արտասանեցին, ամէն մէկը առաջինը ըլլալու մեծ ճիգ մը ցոյց տալով: Երեք քննիչները իրենց տեղեկագիրը տուին. Ա. Նախապտ. կարգէն՝ առաջին հանդիսացած էր Պ. Ռուբէն Նշանեան, Բ. Նախապատրաստական կարգէն՝ Պ. Գէորգ Արապաճեան, ինչպէս նաև Պ. Ազարիկ Եազըճեան, Կրտսերագոյն կարգէն՝ Պ. Սիմոնիկ Եէտիքարտաշեան եւ Կրտսեր կարգէն՝ Պ. Հրանտ Մալխասեան: Այս յաջողութեան մէջ յիշատակելի է ջանքը եւ դերը վարժարանին առնեսխօսութեան ուսուցիչ Արշակ էֆ. Եագուպեանի:

Նոյն օրը, կէս օրէ վերջը ժամ 6 ին, տեղի ունեցաւ ընթացաւարտ կարգին հան-

դէսը, Մատուռին մէջ, ուր խոնուած էր մեծ բազմութիւն մը: Ներկայ էին Տնօրէնը Վեր. Տօքթ. Չէյմպըրս, հանդէսին նախագահը Վեր. Ալէն, Նիկոմիդիոյ հոգիւ՛ Վեր. Փ. Իսքէնտէրեան, Վարժարանին նախկին ընթացաւարտներէն Վեր. Յ. Սամուէլեան, Նիկոմիդիոյ առաջնորդին կողմէ փոխանորդ Գեր. Կարապետ Վ. Մազլըմեան, Տ. Մկրտիչ քհ. եւ Իզմիտի Մութէսարըֆ պէյին կողմէ փոխանորդաբար Մէարիֆ Միւսիրին՝ Հասիպ պէյ:

Յաջորդաբար խօսեցան Պարոնայք Յովհաննէս Գարագեան՝ Ընթանցեալս յարկը. Կարապետ Կոտանեան՝ athletic sports. Կարապետ Կարապետեան՝ Կրօնքին դերը գրականութեան մեջ. Երուանդ Պամաճեան՝ Թանսիլի իլմ:

Յետոյ Վեր. Տօքթ. Չէյմպըրս բաժնեց ընթացաւարտներու վկայականները, հակիրճ ուղերձով մը:

Նուագէ մը վերջ՝ իրենց շնորհակալութիւնները յայտնեցին Բարձր. Վարժարանին մատուցած շնորհակար ծառայութիւններուն համար, եւ յորդորականներ խօսեցան ընթացաւարտներուն, նախկին ընթացաւարտներուն կողմէ Հ. էֆ. Տէր Մկրտիչեան եւ Վեր. Յ. Սամուէլեան. Իզմիտի առաջնորդին կողմէ Գեր. Կարապետ Մ. Վ. Մազլըմեան, տեղիս Հայ-Կաթողիկոսներուն կողմէ Հայր Եղուարդ Սիրունեան, եւ Իզմիտի Միւթէսարըֆ պէյին կողմէ՝ Մէարիֆ Միւսիրին՝ Հասիպ պէյ, որ մասնաւորապէս շեշտեց Կրօնքի ու Աստուածպաշտութեան կարեւորութիւնը դպրոցին մէջ, եւ այսպէսով փշակուեցաւ շարքը դպրոցական այս հանդէսներուն:

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆ

Ատարազարէն կը գրեն մեզ.—

Հայուհեաց վարժարանը իր 20րդ տարեշրջանը փակեց իր ամսվերջի հանդէսով՝ որ տեղի ունեցաւ Յունիսի 15/28ին: Երջանաւարտներուն քարոզը խօսելու հրաւիրուած էր Բրօֆ. Յակոբոս էֆ. Հ. Ճէճիզեան՝

վարժարանին հիմնադիր-խնամակալներէն մէկը, որ Յունիս 12/25ի կիրակի օրը շրջանաւարտներուն պերճիմաստ քարոզ մը խօսեցաւ Յիսուսի «իմ իշխանութիւնս այս աշխարհէս չէ» խօսքը բնաբան առնելով: Ատարազարի Աւետ. Հայոց նորակառոյց եկեղեցին նեղ եկած էր պերճախօս եւ ճարտասան քարոզիչը լսելու համար եկող երկսեռ խումբն բազմութեան:

Ամսվերջի հանդէսը կատարուեցաւ Աւետ. Հայոց եկեղեցիին մէջ, որ այս առիթով կարգ մը փոխակերպութեանց ենթարկուած էր: Սրտին ճակատը շինուած էր ընդարձակ բեմ մը, որուն մէկ կողմը գրաւած էին նախորդ տարիներու շրջանաւարտներ. 30էն աւելի, բեմին ընդարձակ մէկ մասը վարժարանին աշակերտները զբրաւած էին, որոնց առջեւ կիսաշրջանակի մը ձեւով բազմած էին այս տարուան շրջանաւարտները: Բեմին ճակատը զետեղուած էր շրջանաւարտներուն նշանարանը Մաթիլ Բան ժանգոնիլ եւ 1905 թուականը: Բազմաթիւ ներկաներուն մէջ կը նշմարուէին քաղաքին զատուորը, հազարապետ Քեամիլ պէյ, քաղաքապետ Օսման պէյ, Թէրազգը վարժարանին Տնօրէն Ալի պէյ եւ ուրիշ կառավարական պաշտօնեաներ, Տ. Յուսիկ Վ. Էսմէրեան, Տ. Միքայէլ, Տ. Ներսէս եւ Տ. Սերովբէ քահանաները, կայարանապետ Մ. Թոգատ եւ կայարանի միթերանոցի տնօրէն Ա. Ֆէսլեան էֆ., Ազգ. վարժարաններու տեսուչ Մ. էֆ. Երէցեան իր ուսուցչական խումբով, Բէժիի պաշտօնէութիւնը, եւ ուրիշ բազմաթիւ հըրաւիրեալներ եւ շրջանաւարտներու ծնողքներ, որոնցմէ ոմանք եկած էին Պոլիսէն, Նիկոմիդիայէն, եւն.:

Վարժարանը իր քսաներորդ տարեշրջանին առթիւ համայնքին նուիրեց 12 շրջանաւարտներ: Բրոֆ. Յակոբոս էֆ. Ճէճիզեան որ հանդէսին կը նախագահէր, հրաւիրեց ճառախօս օրիորդները իրենց ճառերը կարդալու: Յաջորդաբար խօսեցան՝ Օրիորդ Վայկանոյ Հելվաճեան Կեանքի շուրջանցեալին

ու ներկան. Ագապի Թաղեան Who wins in the Battle of life. Լուսի Դուկասեան՝ Լուսութեան լեզու. Արուսեակ Յակոբեան՝ Les merveilles de la mer. Նուրիցա Վարժապետեան՝ Աղջկանց մտաւորական կրթութիւնը. Մարիցա Անդրէասեան Gravitation in Life. Եւնիկէ Մալխասեան՝ Ներուկ Շնորհալի. Զարուհի Պոլիկեան՝ Helen Keller. Սրբանոյշ Վարժապետեան՝ Լիսանը Օսմանի իլեկտրալարը . եւ Բարուհի Թանձազեան՝ Դեպի կեանքի սպազան: Ճառաստուծիւնները կ'ընդմիջուէին քաղցրալուր երգերով, Բրոք. Յակոբոս էֆ. Ճէճիգեան գեղեցիկ ուղերձէ մը վերջ բաշխեց վկայականները, որմէ վերջ ուղերձներ ըրին Հափիմ էֆէնտին, եւ Վեր. Յովհաննէս Սամուէլեան: Տ. Յուսիկ Վ. Էսմէրեան պահպանիչով փակեց հանգէսը, որմէ վերջ հիւրերը վարժարանին գեղեցիկ պարտէզին մէջ պահ մը հանգիստ առին, որուն միջոցին զովացուցիչներով պատուասիրութիւններ եղան:

Մերոպ Նուպրեան՝ ծանօթ հեղինակ համանուն Ֆրանսահայ բառարանին եւ թարգմանիչ զանազան ֆրանսական գործերու, գեղեցիկ գաղափարը ունեցած է Մոլիէռի ամբողջական գործերուն թարգմանութեանը ձեռնարկելու, եւ գլուխ հանած ալ է մէկ մասը այդ ձեռնարկին, հրատարակելով Ֆրանսացի անմահ երգիծարանին ութը կտորները՝ ստուար հատորի մը մէջ. Մամուրեան Տպարանէն, Աւելորդ է Մոլիէռի գործերուն արժանիքին վրայ խօսք ընել, շեշտելու համար կարեւորութիւնը այս թարգմանութեան: Գործին արժէքը ինքնին պերճախօս է արդէն ու թարգմանիչը շնորհակարարի, Հայ ընթերցողներուն ընծայած ըլլալուն համար ֆրանսացի հեղինակին արժէքաւոր գործը Անուշտ հանրութեան կողմէ եղած արժանի ընդունելութիւն մը՝ պիտի պսակէ թարգմանիչին ջանքը եւ Մոլիէռը հայացնելու իր նախանձախնդրութիւնը:



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԳՈՒՆԱԻՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Երկար ատենէ ի վեր լուսանկարիչները իրենց պատկերներու ն միօրինակութեան վերայ կ'ողբան եւ քիմիագէտներէն կը պահանջեն այն տեսակ միջոց մը՝ որով կարելի ըլլայ իրենց զգայուն ապակիներով գունաւոր նկարներ ստանալ:

Գոյներու լուսանկարը սեւագոյն լուսանկարին բնական կատարելագործումը պիտի ըլլայ: Արեգակը ասոր լաւ յաջողութեան էական գործիչն է. ան միևնոյն ատեն ապակիին վրայ կ'ուղարկէ թէ գոյները և թէ սեւը անխտիր, եւ քանի որ սեւ գոյնը հաստատելու միջոցը գտնուած է, միայն կը մնայ իրենց կարգին միւս գոյներն ալ հաստատել: Այսպէս է խնդիրը և շահեկան ամէն մարդու համար, քանի որ ամէն անհատ այսօր կը լուսանկարէ. գիտուն հետազօտիչները քանի մը տարիներէ ի վեր հետամուտ են անոր գործնական եւ վերջնական լուծումին:

Առաջին փորձը Լիփման կատարեց եւ հանդիսատեսները զարմացան երբ սպիտակ լուսարգելին վրայ ծաղիկներ, փոքրիկ աղջկան մը գլուխը եւ անկենդաններ արտածրգուեցան: Ներկայ գտնուող նկարիչները ներկին վերջաւորութեան կարելիութենէն վախցան, բայց եւ այնպէս անտարբերութեան եղանակը բաւական գործնական չըլլալուն՝ պէտք եղաւ ուրիշ միջոց մը փնտռել:

Նախ փորձեցին իւրաքանչիւրը մէյմէկ լրացուցիչ գոյներով ներկուած եւ իրարու վրայ գրուած երեք ապակիներով գունաւոր նկարներ ձեռք բերել, բայց այս եռագոյնով միջոցը բարեփոխուեցաւ և Լիւմիէռներու մէկ նոր գոյնովը աւելի պարզուեցաւ:

Այս վերջինները մտածեցին գունաւոր

երեք ապակիներուն տեղ երեք գոյները ընդունող մէկ ապակի միայն դնել: Մածուցիկ ծեփով մը ծածկուած ապակիի յը վրայ վրձինով ամենաբարակ գետնախնձորի ալիւր (fécule de pomme de terre) տարածեցին. այս փոշին կը բաղկանար սերտ կերպով իրարու խառնուած երեք մաս ալիւրէ, որոնց մէկը նարնջագոյն եւ միւս երկուքը կանանջ եւ մանիշակագոյն ներկուած էին: Այնպէս որ փոշին ոչ կանանջ է, ոչ մանիշակագոյն եւ ոչ նարնջագոյն, բայց իրեն մէջ այս երեք գոյներն ալ կը պարունակէ:

Բնականաբար ապակիին վրայ ալիւրին հատիկները իրարու քով կը շարուին եւ կանոնաւոր ծածկոց մը կը կազմեն: Ալիւրին հատիկներուն մէջ գտնուած միջոցը դոցելու համար ապակիին վրայ ծեծուած փայտածուխ կը տարածեն եւ ասոնց բոլորին վրայ զգայուն հոյզ մը կ'անցընեն:

Երբ ապակին մութ սենեակին մէջ լոյսին ենթարկուած է՝ լուսաւոր ճառագայթները ալիւրով կազմուած գունաւոր ցանցերէն անցնելէ ետքը միայն զգայուն խաւին կը հասնին: Կարմիր ճառագայթները նարնջագոյն եւ մանիշակագոյն ալիւրին հատիկներէն կ'անցնին, մինչդեռ կանանջ հատիկները կ'արգելեն գայն, ելն: Դիւրաւ հասկնալի է որ développé եղած պատկերը négatifին մէջ սկզբնականին լրացուցիչ գոյները պիտի ներկայացնէ, եւ թէ մասնաւորապէս պատրաստուած ապակիի մը վրայ առնուած այս պատկերը positifին մէջ ներկայացուած առարկային իրական գոյները պիտի տայ:

Լուսանկարիչներուն պահանջած գոյներու պատկերը ճիշդ աս պիտի ըլլար. եւ իւրաւ, եթէ լուսանկարը հնարողները իրենց հանճարեղութեան ապացոյցը տուին, իրենց յաջորդները նուազ ճարպիկ եղած չեն ըլլար, երբ յաջողին նախապէս փոշիի վերածուած եւ յետոյ ներկուած պարզ ալիւրը ապակիին վրայ հաստատել:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ

ԵՒ

Մարտի Բեռնուսուս Հոգեբանական Վիճակ

Ժամանակով մէկու մը առողջ կամ հիւանդագին վիճակը զննելու համար շուտով ելեկտրական հոսանքին կը դէմէին: Մարմինը ելեկտրական հոսանքին աւելի կամ նուազ հաղորդիչ է, իր վիճակին համեմատ: Բայց այս միջոցով զննութիւնը մեծ դժուարութիւններ ներկայացնելուն համար, կամաց կամաց մէկ կողմ գրուած էր:

Ե.-Ք. Միւլըր՝ մարդկային մարմնին վրայ կատարած փորձերէն կը հետեւեցնէ թէ, մեծապէս կարելի է օգտուիլ այդ միջոցէն, որոշելու համար անհատի մը բնաստական եւ հոգեբանական պայմանները:

Ե.-Ք. Միւլըր շատ զարմացած է տեսնելով որ մարմնին հաղորդիչ ըլլալու յատկութիւնը մեծապէս փոփոխական է օրուան այլ եւ այլ ժամերուն մէջ: Փորձի ենթարկուած անձին կերածներն ալ մեծ շափով ազդեցութիւն ունին այս մասին:

Հետաքրքրական կէտ մըն է նաև սա թէ, միւսնոյն անձին վրայ կրկնուող եւ տասնէն տասնեւհինգ վայրկեան տեւող փորձերու տեւողութեան միւսնոյն վայրկեանին միւսնոյն թուական արժէքները ի յայտ կուգան, նոյն իսկ եթէ փորձերը իրարմէ օրերով բաժնուած ըլլան:

Փորձի ենթարկուած անհատին առանձին սրահի մը կամ երրորդ անձի մը հետ ըլլալը թէ՛ թուական արժէքներուն եւ թէ՛ հոսանքին կանոնաւորութեան վրայ իր որոշ ազդեցութիւնը ունի: Ամէն անգամ որ մէկը կը մտնէ փորձի սրահը կամ աղմուկ մը կը լըսուի, իսկոյն մարմնին ելեկտրական ընդդիմութիւնը տարօրինակ փոփոխութիւն մը կը կրէ:

Շնչառութիւնը, ասոր զաղարու մը նոյնպէս իրենց որոշ ազդեցութիւնը ունին փորձին արդիւնքին մէջ:

Արթնութեան եւ քունի ատեն առնուած

չափերը թոյլ կուտան որոշել այս վերջինին բնութիւնը, ինչպէս նաև երազներու սաստկութիւնը:

Թէ՛ իրական եւ թէ՛ թելադրուած ամէն նեղութիւն մարմնին ելեկտրական հոսանքին հանդէպ ունեցած ընդդիմութիւնը կը փոխէ:

Ջղայինները, ծխողներն ու խմողները ելեկտրական վերջին աստիճանի ցած ընդդիմութիւն մը ունին:

Առարկայական պատճառներէն զատ, ամէն ներքին կամ արտաքին հոգեբանական ազդեցութիւն մարմնին ընդդիմութեանը մէջ առաջ կը բերէ մեծ փոփոխութիւններ: Ամէն անգամ որ փորձարկեալը ենթաձայ կ'ըլլայ քիչ շատ զօրաւոր հոգեկան զգացողութեան մը կամ յուզումի մը, իսկոյն անոր ընդդիմութիւնը չորս հինգ անգամ վար կ'իջնէ: Նոյնպէս ամէն անգամ որ փորձարկեալը ունկնդրութիւն ընէ, կամ որ եւ է կերպով իր ուշադրութիւնը կեղրոնացնէ, կամեցողութիւն կամ ճիգ ընէ, ամէն անգամ որ անոր զգայարանքները գործեն կամ գործել ուզեն, իսկոյն արդիւնքը կը տեսնուի ընդդիմութեան փոփոխութիւններուն մէջ:

Այսպէս ուրեմն, ելեկտրական հոսանքին մարդկային մարմնին մէջէն անցած ատեն կրած ընդդիմութեան փոփոխութիւններուն հիմնաւոր ուսումնասիրութիւնը եւ անոնց հպատակած օրէնքներուն զիւտը մ'ըծ շահեկանութիւն կրնան ստանալ մարդուն ֆիզիքական եւ հոգեկան վիճակին ծանօթութեանը մէջ: Եւ եթէ կարելի ըլլար թրրթոսացումներու ձեւին տակ արձանագրել ենթակային ոչ թէ բերնէն ելածը, այլ բուն իսկ մտածածը կամ զգացածը, ինչ հրաշալի փորձաքար կը դառնար ելեկտրական հոսանքը ու դատապարտութիւնը կեղծիքին եւ սուտին:

ԱՆԱՄԱՆԵՐԸ ԴՈՒՆԱԻՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Իսնի՛ քանի ակեր կամ թանկագին քարեր իրենց արժէքը մեծապէս պիտի աւելցնէին, եթէ անոնց գոյն տրուէր կամ անոնց դոյնին մէջ փոփոխութիւն մը մտցնելը կա-

րելի ըլլար: Պէտք է ըսել որ մինչեւ հիմա այս բանը անկարելի եղած էր:

Երէկուան անկարելին այսօրուան կարելին է յաճախ գիտութեան համար: Ու Պ. Ֆուքս ադամանդները գունաւորելու կերպ մը գտած է, եւ աս' Ք կամ X ճառագայթներուն շնորհիւ: Ֆուքս անոնց միջոցով այլ եւ այլ մետաղներու ամենափոքրիկ շամանդաղները մտցնել կուտայ ադամանդին ծակտիքներուն մէջ, որ այսպէսով կը գունաւորուի: Այս կերպով ստացուած գունաւորումները շատ հաստատուն են, բնաւ չեն փոխուիր նոյն իսկ թթուներու երկարատեւ ազդեցութեան տակ: Ելեկտրական հոսանքին ուղղութիւնը փոխելով ադամանդը կատարելապէս կը կորսնցնէ իր ստացած գոյնը, որովհետեւ մետաղական շամանդաղները դուրս կ'ելլեն անոր ծակտիքներէն:

Ֆուքս միևնոյն մէթոտով կ'ուզէ թանկագին քարերու երանգներուն մէջ մտցնել փոփոխութիւններ քարերու արժէքը բարձրացնելու համար:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵՄ ԱՆԱՄԱՆԵՐԸ

Աշխարհիս ամէնէն մեծ ադամանդն է հուշակաւոր Գիւլիման կոչուածը, որ վերջերս հարաւային Ափրիկէի մէջ գտնուած է եւ 25 միլիոնէն աւելի կ'արժէ:

Հիմա Լոնտոն բերուած է և երկուքուկէս միլիոն ֆրանքի ապահովագրուած: Կը կարծուի թէ յղկուելէն վերջն ալ 286 կրամ պիտի կշէ: Չըսուիր սակայն թէ Ֆուքսի գիւտէն պիտի օգտուի՞ ան թէ ոչ:

Գիւլիմանէն վերջ՝ ահա աշխարհի մէկ քանի շքեղ եւ խոշոր ադամանդները:

Պօրնէոյի Մաթանի Բաճային ադամանդը, որ 300 քրազէն աւելի կը կշռէ:

Քօֆի Նուր կամ Լուսոյ լեռ կոչուած ադամանդը, որ 102 քրաք կը կշռէ:

Չարին ադամանդը, Օրլով, զոր կատարինէ կայսրուհին 2,500,000 ֆրանքի գնած է:

Ֆրանսայի ադամանդը, Բեժան, որ 136 քրաթ կը կշռէ ու կը գնահատուի 12,000,000 ֆրանք:

Հարալի Լուսաւորը, որուն ձեւն ու վճի-

տուեթիւնը կատարեալ են: Կը կընէ 125 քը-
րադ: Այս ադամանդը տաշուելէն առաջ 254
քրաթ կը կընէր:

Աւստրիայի կայսեր ադամանդը, որ 139
քրաթ կը կընէ ու 2,608,325 ֆրանք կ'արժէ:

Եւ մտածել թէ այս քանի մը կրամ կըը-
ռող եւ միլիոններ արժող ադամանդները
ուրիշ բան չեն եթէ ոչ բիւրեղացած ածուխ:
Եւ սակայն քիլոն մէկ քանի սանդիւմ ար-
ժող ածուխը ո՛ւր, ադամանդը ո՛ւր: Բնա-
կան օրէնքներու տակ անարժէք ածուխը
բիւրեղացեր ու հիանալի յատկութիւններ է
առեր, այնպէս որ շատ դժուարաւ կարելի
է հաւատալ թէ շողշողուն ադամանդը սա-
մեր սեւ ածուխէն է առաջ եկած: Իրակա-
նութիւնն է սակայն ան, ու անոր ծանօ-
թացումը բնաւ չնսեմացներ ադամանդին
արժէքը:

Մագուսին ստորնութիւնը երբեք ան-
պատուութիւն մը չնկատուիր լուսաշող ու
փաղփուն այդ քարին համար: Դիտելին
ծագումն մը ստորնութիւնը չէ, այլ ձեռք
ձգուած վիճակի մը բարձրութիւնը: Ուրիշ դի-
տելի կէտ մըն է նաև սա թէ բնական զօ-
րութիւնները, որոշ պայմաններու մէջ ներ-
գործելով, անհաւատալի փոխակերպութիւն-
ներ առաջ կը բերեն և սեւ ածուխը թանկա-
գին ադամանդի կրնան փոխել:

Ահա թէ ինչպէս Մուսսան արուեստա-
կան ադամանդ կը պատրաստէ:

Ելեկտրական փոռի մը մէջ կը հալեցնէ
ձուլածոն, այսինքն թափծու երկաթը, անոր
վրայ կը լեցնէ ածուխ, որ կը լուծուի, ինչ-
պէս շաքարը ջուրին մէջ: Երբ ձուլածոն
լաւ մը յազեցած է ածուխով, իսկոյն զայն
կը թափէ պաղ ջուրի մէջ ու հաստատուն
կեղեւ մը կը կազմուի: Ներքին հեղուկ մա-
սը, այսպէս շրջապատուած զօրաւոր պատ-
եանով մը, կամաց կամաց կը պաղի, եւ ո-
րովհետեւ ձուլածոն ալ ջուրին նման հաս-
տատուն դառնալով իր ծաւալը կ'աւելցնէ,
հաստատուն կեղեւէն ահագին ճնշում կը
կրէ: Ահա այս մեծ ճնշումին ազդեցութեանը
տակ՝ ածուխը կը բիւրեղանայ: Հալեցնելով
ձուլածոն թթուներու մէջ, ադամանդի փոք-
րիկ կտորներ ձեռք կը բերուին:

Գիտական աշխատանոցի մը մէջ ձեռք
բերուած եւ բնութեան ընդերքներուն մէջ
կատարուած ճնշումներուն միջեւ սաստկու-
թեան տեսակէտով ահագին տարբերութիւն
կայ: Ասով հանդերձ շատ հաւանական է որ
բնութիւնը ճնշումին հետ ուրիշ ազդակ ալ
գործածած ըլլայ, ադամանդները յօրինելու
համար:

ԹՈՒՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԱԳՈՒԹԻՒՆԸ

Արագութիւնը քսաներորդ դարու մեծ
պահանջներէն մէկն է: Շոգեկառքերը հաս-
կըցած են զայն ու տարուէ տարի իրենց ա-
րագութիւնը կ'աւելցնեն: Կան որ մինչև
150 եւ աւելի քիլոմէթր արագութեամբ կը
սուրան մէկ ժամուան մէջ: Գերմանիոյ մէջ
կատարուած փորձերը ձեռք բերած են մին-
չև 210 քիլոմէթր մէկ ժամուան մէջ, ելեկ-
տրաչարժ կառայուածքի մը միջոցով: Բայց
գործնականապէս այսօր շոգեկառքերը 120
քիլոմէթրը չեն անցնիր:

Ինքնաչարժներն ալ երբեմն բերեմն մին-
չև 150 քիլոմէթր արագութեամբ կը սու-
րան, փոքր միջոցի մը մէջ:

Թոշուները սակայն մարդկային փորձե-
րուն վրայ կը խնդան, ցոյց տալով արա-
գութիւններ, որոնց հասնելու համար տա-
կաւին բաւական ժամանակի և համբերու-
թեան պէտք ունինք:

Այսպէս՝ լորամարզին մէկ երկվայրկեանի
մէջ 17 մէթր ճամբայ կ'ընէ, այսինքն 61
քիլոմէթր մէկ ժամուան մէջ: Մինչև մօտ
ժամանակներս Զուիցերիայի մէջ ճեպըն-
թացները ատկէ աւելի արագ չէին երթար:
Ուղեւոր աղաւնին մէկ երկվայրկեանի
մէջ 27 մէթր կը կարէ կամ ժամը 100 քի-
լոմէթր:

Արծիւր կը սուրայ մէկ երկվայրկեանի
մէջ 31 մէթր արագութեամբ, այսինքն ժա-
մը 112 քիլոմէթր:

Միծեռնակը՝ 67 մէթր մէկ երկվայրկեանի
մէջ, կամ 241 քիլոմէթր մէկ ժամուան մէջ:

Վերջապէս մաքայուկը (տաղ գորրլանդը)
բառին բուն նշանակութեամբը կը սուրայ
մէկ երկվայրկեանի մէջ 88 մէթր ճամբայ
առնելով, այսինքն 316 քիլոմէթր մէկ ժամ-
ուան մէջ:

Շ Ա Ր Թ ՈՒ Ա Ն Ն Օ Թ Ե Ր

Պէջրութի Ամերիկեան բժշկական վարժարանէն բժշկութեան վկայական ստացած են հետեւեալ Հայ ընթացաւարտները որոնք մեծամասնութիւնը կը կազմեն՝ օտարազգի բժիշկներուն քով.—Տեարք Տօքթ. Ներսէս Պապտեան, Յակոբ Էմինեան, Մուշեղ Հատիտեան, Յովհաննէս Գամպուրեան, Եաղուպ Քէլլէեան, Յակոբ Մահտեսեան, Արմենակ Մարգարեան, Լեւոն Մելիտոնեան, Լեւոն Սիւնի, Զարեհ Թահմազեան եւ Ոսկան Թօփալեան: Իսկ ղեկագործական ճիւղը ունեցած է 9 վկայուողներ՝ որոնց Հայ են երեքը.—Պր. Պր. Արրահամ Աթթարեան, Գառնիկ Համբարձումեան եւ Յովակիմ Շաքարեան:

×

Հայ մեծահոգակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի մէկ ծովանկարը, որ կը գտնուի Ուսուցիչներու Օգնութեան Սընտուկի գոյքերուն մէջ, հնչուն զրամի վերածելու եւ նոյն սնտուկին զբամազուխին միացնելու համար, երկու հարիւր հոգի կէս կէս օսմ. ոսկի պիտի վճարեն, եւ 100 ոսկին գոյանալէ ետքը, ո՛րուն որ վիճակի ծովանկարը, պիտի ստանայ զայն՝ կէսօսկիի փոխարինութեամբ: Կ'արժէ՛ որ ամէն զեղարուեստասէր փութայ մասնակցիլ այս զեղեցիկ առիթին:

×

Ստացանք Ատաբազարի Հայուհեաց վարժարանին Յայտագիրը, որ հրատարակուած է իր 20րդ տարեշրջանին առիթով, եւ կը պատկերացնէ այդ շրջանին միջոցին ունեցած գործունէութիւնը, ինչպէս նաև կը հաղորդէ վարժարանին մասին կարեւոր տեղեկութիւններ: Կը բովանդակէ հետեւեալ էջերը.— Խնամակալութիւն: Ուսուցչական մարմին: Պատմական օանթութիւններ: Շէնքերը: Մուտքի պայմաններ: Նպաստ. Թանգարան եւ գրատուն: Առտնին գործեր: Կար

եւ ձեւագիտութիւն: Առողջապահական խրնամք: Տնօրէն ժողով: Անգլերէն խօսելավարժութիւն: Աբտասանական վարժութիւն: Զայնական երաժշտութիւն եւ նուագ: Կրթարցական ընկերակցութիւններ: Ուսանողութիւն: Նախապատրաստական ճիւղ: Կրթարցական տարեշրջան եւ քննութիւններ: Ուսումներու ծրագիր: Շրջանաւարտներուն: Ընթացաւարտներու ցանկ: Արդի աշակերտուհիները: Վարժարանը մինչեւ հիմա ունեցած է 134 ընթացաւարտուհի: Իսկ արդի ուսանողութեան թիւն է 92:

×

Մոսկուայի Լազարեան Ճեմարանի Տրդդատարանէն այս տարի իրենց ընթացքը աւարտեցին հետեւեալ տասը Հայ ուսանողները.—Պր. Պր. Պալպանեան (Նօր Նախիջեւանցի), Ոսկանեան (Խրիմցի), Պալախեան (Ստաւրոպոլցի), Հաճեան (Նախիջեւանցի), Խանզատեան (Գարաքիլիսէցի), Սէֆէրեան (Արմաւիրցի), Քրիստափորեան (Նախիջեւանցի), Զարբխեան (Նախիջեւանցի) եւ Պոստուկեան (Էջմիածինի ճեմարանէն):

×

Երկուշաբթի օր, Բերայի Երրորդութիւն եկեղեցիին մէջ, վայելուչ հանդիսաւորութեամբ եւ բազմաթիւ հանդիսականներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Գատիգիւղի եկեղեցիին Տ. Խոսրով Գահանայ Գալփագճեանի աղջկան Օր. Ռօզա Գալփագճեանի (քոյր մեր աշխատակից Ռօման Տ. Խոսրովի) ամուսնական հանդէսը՝ ծանօթատամարոյժ Սահակ էֆ. Գահանայի հետ: Արարողութեան կը մասնակցէին եպիսկոպոսներ, վարդապետներ, եւ քահանաներ: Պատկազրութեանէն ետքը, ներկաներուն պատուասիրութիւններ եղան եկեղեցիին հիւրասրահին մէջ:

Շնորհաւորութիւններ նորապսակ ամուսին, Գալփագճեան եւ Գահանայի ընտանիքներուն:



Թիֆլիզի Երաժշտական դպրոցի դահլիճին մէջ վերջերս տեղի ունեցեր է Օր. Աստղիկ Արրահաւեանցի տուած նուագանդէսը, ընկերակցութեամբ շուքակահարի մը, կը գովեն օրիորդին ձայնը եւ դրուատիքով կը յիշատակեն այս երաժշտական ձեռնարկին յաջողութիւնը:



Արթարիլէն կը գրուի. — «Թատերասէրներու խումբը դպրոցի օգտին ներկայացուց Բուչարեանի «Բա՛նտ թէ հիւանդանոց» ողբերգութիւնը եւ Շչեգուլովի «Տօթթոր թաթոս» վօտվիլը: Ներկայացումը յաջող անցաւ: Ուրախալի երեւոյթ է որ մեր գաւառական քաղաքներէն մէկուն մէջ, ուր կ'ապրին միայն ափ մը ազգակիցներ, այդքան լաւ քայլեր կ'առնուին: Ուրախալի է այն իրողութիւնը որ այդ ինկած քաղաքին մէջ ամէն դասակարգի Հայ օրիորդ կը մասնակցի ներկայացման եւ անպատուաբեր չնկատեր բեմ ելլել»:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Յրանքեւզերման բանակցութիւնները անցուցին վտանգալի չրջանը: Հիմա հանդարտօրէն կը խօսուի Դեսպանախորհուրդին վերաբերեալ խնդիրներու վրայ, եւ նրկու կողմէ յոյս կայ գոհացուցիչ արդիւնքի մը յանգեալու: Տագնապալի դարձուածքի մը վախը փարատած ըլլալով, կը գրէ «Թայմզ», հասարակութիւնը կը շատանայ համբերութեամբ սպասելով կառավարութեան վերջնական որոշումին: Դեռ ժամանակ մը պիտի անցնի մինչեւ որ համաձայնութիւն գոյանայ, եւ ա՛լ աւելի երկար ժամանակ մը պիտի անցնի մինչեւ որ վերջ գտնէ բացարձակ

աննպաստ տպաւորութիւնը զոր յառաջ բերին գերմանական հակաֆրանսական մէթոտները Մարոքեան խնդրին դարձուածքներուն մէջ: Եթէ Գերմանիա դադրեցուց իր սպառնալից վարմունքը, պատճառը այն է որ՝ սխալ տեղեկութիւններու վրայ՝ անճիշդ հաշիւ մը ըրած էր: Կը յուսար իր առջեւ տեսնել արտաքին գործոց տկար նախարար մը, որ բուրո՞վին պիտի փոխէր իր նախորդին քաղաքականութիւնը: Այս յոյսը պարապը ելաւ: Մ. Ռուվիէ այդ տեսակ տկարութիւն չցուցուց, կը յուսար որ ֆրանսացի ընկերվարականները միջազգային խնդիր պիտի յարուցանէին Մարոքի համար, և հըրապարտկաւ պիտի յայտարարէին որ բնաւ չեն ուզեր Ֆրանսայի պատերազմ ընելը ո՛ր եւ է պատճառով: Այս հաշիւն ալ պարապը ելաւ: Իր դիւանագիտութեան ի գործ դըրած ջլատիչ միջոցներովը կը յուսար քայքայել անգլեւֆրանսական համաձայնութիւնը: Ընդհակառակը, աւելի զօրացուց զայն: Բայց ինչ որ Գերմանիա բնաւ հաշուի դըրած չէր՝ Մ. Նահանգներու կարծիքն էր, որ բացորոշապէս իմաց տրուեցաւ իրեն: Եթէ Դեսպանախորհուրդը գումարուի, Գերմանիա անուանական գոհացում մը կրնայ գտնել. բայց անկէ վատ, գերման դիւանագիտութիւնը ցուցնելիք չա՛հ մը չունի փոխարէն այն ցաւալի տագնապին՝ զոր յարոյց պահ մը:

Տեղի ունեցող բանակցութիւններուն գալով, շատ փափուկ հարց մը պիտի ըլլար գիտնալ թէ՛ երկու կառավարութիւններէն ո՛րը աւելի զիջողութիւն ցցուց: Սաստոյգ է որ Ֆրանքեւզերմանական բանակցութիւնները մի միայն Մարոքի գործերուն պիտի վերաբերին, եւ ուրիշ խնդրի պիտի չզգային: Անգլեւֆրանսական համաձայնութիւնը անվթար պիտի մնայ, կամ աւելի պիտի զօրացուի: Մ. Ժօրժ Բլէմանսօ, ընկերվարական կուսակցապետը, կը գրէ Օռօնի մէջ. — «Գալով Անգլիոյ հետ մեր մերձեցումին, Եւրոպայի մէջ ո՛չ ոք կ'անգիտանայ թէ անոր վրասելու համար եղած գերմանա-

կան փորձը ա՛յն աստիճան պարապը ելաւ որ՝ ֆրանսացի եւ անգլիացի ազգերը այսօր ամէն ժամանակէ աւելի միացած են»։ Գերմանիա, որ ջերմ պաշտպան էր դեսպանախորհուրդի գումարման, կը գրէ «Թան», եւ չէր ընդուներ որ կարելի է հասկացողութիւն մը յառաջ բերել 1880ի պայմանագիրը ստորագրողներէն դուրս, շարունակ կը հակառակէր ֆրանսական տեսութեանց։ Ամէն ոք շուարած մնացած էր թէ ի՛նչպէս անցնելու էր այս փոսին վրայէն. բայց ծանուցագիրներու փոխանակութիւնը եւ Պերլինի ու Բարիզի մէջ կատարուած բանակցութիւնները լուսաբանեցին կացութիւնը։ Դիւանագիտութիւնը նոր ճամբայ մը գտաւ։ Այն ծրագիրը զոր Գերմանիա չէր կարծեր որ կրնայ պատրաստել Ֆրանսոյի հետ, մասնաւոր համաձայնութեամբ, կարելի չէ՞ր որ էմիրը ինքն իսկ պտորաստէր զայն եւ այս մասին համաձայնութիւն գոյացնէր շահակից տէրութեանց հետ։ Գերմանիա ասանկ կ'առաջարկէ իր ծանուցագրին մէջ, եւ կը կարծուի թէ ֆրանսական Արտաքին Գործոց պաշտօնատունը լաւ ընդունելութիւն ընէ այս առաջարկին։ Գերմանիա որ արդէն էմիրին ներշնչած էր դեսպանախորհուրդ գումարելու առաջարկը, նոր առաջարկ մը պիտի ընէ էմիրին որ ծրագիր մը զրկէ Մարոքի մէջ շահ ունեցող տէրութեանց, եւ այն տեսակ ծրագիր մը որ ընդունելի ըլլայ ամէնուն կողմէ. եւ Գերմանիա պիտի ընէ ասիկա։ Ասով Ֆրանսա դեսպանախորհուրդին առաջարկը ընդունած պիտի ըլլայ, եւ ոչ թէ տեղի տուած պիտի համարուի, իսկ Գերմանիա երեւութապէս եւ ոչ թէ իրական յաջողութիւն մը ձեռք բերած պիտի ըլլայ, ինչ որ կ'երեւայ թէ անհրաժեշտ կը համարուի իր ազդեցութիւնը պահպանելու համար։ Գրեթէ ամէնուն բերանն է որ Վիլհէլմ Բ. ի Դանճէր երթալուն նպատակն էր միայն՝ խորտակել Գերմանիան կղզիացնելու համար Մ. Տելքասէի բռնած քա-

ղաքականութիւնը, եւ հիմա որ ֆրանսական կառավարութիւնը ցոյց տուաւ թէ ոեւէ թշնամական զգացում չի տածեր Գերմանիոյ հանդէպ, շուտափոյթ կերպով կ'ուզուի կարգադրել Մարոքեան վէճը։ Ջերմ փափաք կը յայտնուի որ Ֆրանսա եւ Գերմանիա նորէն հաշուին, և ցրուուին ցամաքային երկու դրացի տէրութեանց շուրջ ճարտարօրէն հաւաքել տրուած ամպերը, որոնք քիչ մնաց որ աշխարհի խաղաղութեան վրդովմանը պատճառ ըլլային։

ՄԱՆ ՄՐ. ՃՕՆ ՀԷՅԻ

Շարաթ օր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մր. Հէյ մեռաւ։ Մր. Ճօն Հէյ, լրագրող, հեղինակ և քաղաքագէտ, ծնած էր 1839 Հոկտեմբեր 2ին Ինտիանա նահանգին մէջ, Սալէմ։ Ուսումը եւ վկայականը ստացաւ Պրատեն համալսարանին մէջ 1858ին։ Երեք տարի վերջ Իլլինոյս նահանգին մէջ փաստաբան եղաւ, բայց շուտով թողլով այդ գործը, գնաց Ուաշինկղրն, Լինքըլն նախագահին օգնական քարտուղարի պաշտօնով։ Աւելի ետքը եղաւ նախագահին անձնական թիկնապահը։ Հիւսիսայիններու եւ հարաւայիններու պատերազմին ժամանակ՝ քիչ մը ատեն ծառայեց Հընդըր եւ Կիլմօր զօրավարներուն ձեռքին տակ, ու գնդապետի եւ դեր զօրավարի աստիճանին բարձրացաւ։ 1865էն 1867 Բարիզի Ամերիկեան դեսպանատան քարտուղար անուանուեցաւ, իսկ 1867-68 Վիեննայի Ամերիկեան գործակատարութիւնը վարեց, 1869ին Մատրիտի Ամերիկեան դեսպանատան քարտուղար եղաւ մինչեւ 1870, որ ատեն Միաց. Նահանգները դարձաւ եւ Նիւ Եօրկ Դրիպլիւն թերթին խմբագրութեան մէջ մտաւ։ 1873ին խմբագրական կեանքէն ալ հրաժարելով գնաց Օհայօ նահանգը, թէպէտ իր աշխատակցութիւնը կը շարունակէր նուրբել թերթին։ 1881 Ապրիլէն Նոյեմբեր, մինչ Նիւ Եօրկ Դրիպլիւնի

խմբագրապետը Եւրոպա կը գտնուէր, Մր. Հէյ ինք ստանձնեց թերթին խմբագրապետութիւնը: 1879էն 1881 արտաքին գործոց նախարարի օգնական եղաւ: Իրիպիւնի աշխատակցած պահուն մեծ համբաւ չահեցաւ գաւառաբարբառ բանաստեղծութիւններու հաւաքածոյովը զոր 1871ին առանձին հատորով հրատարակեց: Միեւնոյն տարին հրատարակեց նաեւ Քառորդեան օրեր անուն գործ մը որ Սպանիական կեանքէ և նկարագրէ քաղուած ուրուագիծներէ կը բաղկանայ: 1881ին, Ուաշինկըընի միջազգային առողջապահական վեհաժողովին ներկայ եղաւ իբր պատուիրակ Միացեալ Նահանգներու եւ ընտրուեցաւ նախագահ վեհաժողովին: Յետոյ ճօն Նիքօլէյի աշխատակցութեամբ գրեց կենսագրութիւնը Աբրահամ Լինքոլնի:

1899էն ի վեր Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը կը վարէր կը պատկանէր հանրապետական կուսակցութեան. 1896ին մեծ գործունէութեամբ մասնակցեցաւ ի նպաստ Մաք Քինլիի ընտրական պայքարին եւ ինք եղաւ գլխաւոր ստատարներէն մէկը Մաք Քինլիի ընտրութեան: Մաք Քինլի 1897ին զայն անուանեց Լոնտոնի Ամերիկեան դեսպան, պաշտօն՝ զոր վարեց մինչեւ 1898: Ամուսնացած էր մեծահարուստ կնոջ մը հետ, որմէ ունեցաւ մանչ զաւակ մը որ երկու տարի առաջ մեռաւ Եէյլի համալսարանին մէկ պատուհանէն վար իյնալով: Ունի նաև երկու աղջիկ:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը
ՕՐՈՒԱՆ ՎԻՃԱԿԸ

Ծանուցուեցաւ կոմս Մուրավիէֆի անուանումը՝ իբրև ուսական լիազօր պատուիրակ Ուաշինկըընի մէջ կատարուելիք հաշտութեան բանակցութեանց: Ճարոն իր կողմէ լիազօր պատուիրակ ընտրած է արտաքին գործոց նախարար Պառոն Քոմուրան եւ Ուաշինկըընի ճարոնական դեսպան Պ. Թաքահիրան: Առաջին քայլը առնուած է երկու կողմէ ալ, եւ վերջնական բանակցութիւններուն սկսուելը մօտ կը թուի: Դիւանագիտական անգործութեան այս շրջանին

մէջ, զինուորական գործողութիւններն ալ դադար մը պիտի ունենան: Այսպէս այս անգամ ճշմարտանման զրոյց մը կը պտտի թէ զինադադար մը պիտի կնքուի, որուն մասին դիմում քրած է Ռուսիա, նախագահ Բուզովէլի դիմումը ընթացութեամբ եւ որուն պայմաններուն նկատմամբ ընդդիմադիր բանակներու ընդհ. հրամանատարները պիտի հրաւիրուին համաձայնիլ:

Շատ դիւրին պիտի ըլլայ երկու սպայակոյտներուն համար՝ պատրաստել այդ զինադադարի պայմանագիրը: Մուզտէնի ճակատամարտէն ետքը ինքնին գծուած է ռազմագիտական սահմանագիծը: Ծովու վրայ պայքարը վերջացած է: Զինուորներու փոխադրութեան խնդիրն ալ ինքնին լուծուած կը նկատուի, քանի որ Ճարոնցիները երկար ժամանակ ունեցած են ցամաքային ռազմադաշտին վրայ ուզածնուն չափ զօրք թափելու: Պատերազմը ինքնին հասած կ'երևայ իր վերջին կէտին, զոր երկու կողմի դիւանագէտները կրնան իրենց մեկնակէտ ընտրել:

S. Սահակ Քահ. Տէր Սարգսեան Պէրպէրեան Տպարանէն հրատարած է Ասուած եւ Բնութիւն կամ Ս. Գիրք եւ Գիտութիւնք անուն հատոր մը, որուն կոչումն է, որչափ դասագիրք մը ըլլալ երկրորդական վարժարաններու, սակայն առաւելագոյն «ազգային բանասէր երիտասարդաց հետաքրքրութեան օրինաւոր ջամբ եւ գոհացում տալ, նպատակ ունենալով զիրենք նիւթապաշտ անաստուածութեան և սկեպտիկ անհաւատութեան ճանկերէն զգուշացնել եւ ճշմարտին Աստուծոյ յաւիտենական ճշմարտութեան ծոցը առաջնորդել», ինչպէս կը բացատրէ հեղինակը մեզի ուղղուած նամակի մը մէջ: Իր այդ հանգամանքներով, գործը արժանի է ընթերցանութեան, մասնաւանդ իր դիւրամատչելի գիտով:

Տէր եւ ՏԵՐԿՆ
Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻԻՃԱՆ
Տպագ. ՆՅԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Պապը Ալի Տusskuի Իգսամ Երագրին դէմքիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ոնենալ, որ վհտե լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր Ի

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենալեր կը գտնուին

մեքենան յաւագոյնն է. այս մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԹՈՒԱՆ
Մ Ա Ս Ն Ա Վ Ջ Ա Ր Ո Ւ Ս Ն Է Ր

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դիմաց.

ՊՈԼԻՍ 1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պայագիտ. (42—50)

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կասաբեալ Երաւաւորութիւն

Մասնանիղեր գաւառներու բոլոր ֆաղաֆներուն մէջ

Ակռայի հիւանդութեան որ եւ է տեսակը՝ ցաւ մըն է՝ որուն դիմադրել անհնար է, և որ մարդուս կեանք կը դառնացնէ: Ու անոր դարմանումին տեսակներն ալ՝ կը վերաբերին արուեստի մը՝ ամէնէն փափուկներէն է արուեստներուն: Ու եւ է ատամնա-յոժ՝ ատամնարոժ է: Բայց ամէն ատամնարոյժ չի կրնար գոհացուցիչ կերպով կատարել ակռայի դարմանում: Պէտք է ուրեմն դիմել ատամնարոյժի մը՝ որ վստահութիւն ներշնչած ըլլայ ամէն կերպով:

Ա. Բ. Ա. Մ. Գ. Ա. Բ. Ա. Գ. Ա. Շ
Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ա. Յ. Ժ

Հաստատուած կարողութիւն մը ձեռք բերած է այս մասին:
 Կատարեալ դարմանում ամէն տեսակ ախտանքոս: Մտանաւոր յաջողութիւն արհեստական՝ ախտանքոս զետեղման, բնականին անթորի գեղեցկութեամբը: Տարիներէ ի վեր ձեռք բերած իր յաջողութիւնը եւ յաճախորդներու կողմէ գտած ընդունելութիւնը՝ լաւագոյն երախտարոշութիւններն են՝ որ ակռայի կողմէ ու եւ է նեղուող՝ դիմէ Արամ Գարագաշի՝ վստահ թէ՛ յուսացածէն աւելի գոհ պիտի մնայ:
 Կը գտնուի ամէն առտու կանուխ Սկիւտար Իճատիէ իր բնակարանը. եւ ամէն օր-4էն մինչեւ 11^{1/2}, Պօլիս Պահճէ Գարու, Պին-Պիր Չէշիտի դիմացը: Եւ կիրակի օրեր՝ ժամադրութեամբ:

19-30

Թ Է յ մ ի գ ն է ֆ
Ա. Բ. Ա. Ն. Յ. Ա. Ն. Գ. Ա. Մ. Մ. Ը. Ա. Յ. Յ. Ե. Լ. Ե. Լ. Ա. Ի



Կ. Ե. Ա. Վ. Բ. Ա. Բ. Ա. Ն. Ե. Ի. Յ. Ի. Ս. Ա. Գ. Ա. Բ. Ա. Ն. Ե. Լ. Ե. Լ. Ա. Ի

Կ. Պօլիս, ձեւալ Պէյ խանի սակ, թիւ 10

Ո Ի Բ Պ Ի Տ Ի Գ Տ Ն Է Ք

Կտրուով եւ զարդարուն տուփերով
 Եւ անհամեմատ աման պիտի

Ա. Մ. Ե. Ն. Ա. Յ. Ա. Ն. Ե. Լ. Ե. Լ. Ա. Ի

Հնդկաստանի, Ճապոնի, Սէյլանի, Չինաստանի

Թ Է Յ Ե Բ Ա Ի

Եւ մանաւանդ մասնաւորապէս ներածուած **Տարբերակաւոր թիւ**

Գ. Ա. Բ. Ա. Ն. Ե. Լ. Ե. Լ. Ա. Ի. Մ. Բ. Մ. Բ. Վ. Ա. Յ. Ա. Ն. Ե. Լ. Ե. Լ. Ա. Ի. Փ. Ն. Տ. Ա. Ե. Յ. Ի. Բ.

Բոլոր թիւն ծախողներու քով

33--50